Մեր ողջ մշակույթը, որով մենք հպարտանում ենք՝ սկսած եկեղեցաշինությունից, մատենագրությունից, հոգևոր երաժշտությունից, մանրանկարչությունից, այբուբենից, ամբողջի համար պարտական ենք եկեղեցուն: Այն բոլոր սրբերը, որ ուղղակի սրբությամբ ենք տալիս՝ Մաշտոցից, Նարեկացուց մինչև Կոմիտաս, բոլորը հոգևորականներ են:

Կարդացեք՝ էջ 4

Ընդդիմության հաղթանակին կարող է խանգարել մեկ բան: Տղերք, հանկարծ ձեր բռնած գործին վատություն չխառնեք՝ տակից, թե՝ գլխից: Ով թուլացավ՝ փչացնելու է ժողովրդի հաղթանակը: Որոշեք, միասին հայտարարեք, որ ոչ մի պարագայում, անգամ ընտրությունների ամենաարտառոց արդյունքների դեպքում ՔՊ-ի հետ չեք համագործակցելու:

Կարդացեք՝ էջ 5



Այսօր պետք է խոսվեր Մաշտոցից, Նժդեհից, հայկականությունից, դա ծալել մի կողմ են դրել: Շուտով Արարատն էլ կարգելվի բեմից ասել, հայոց լեզուն, լիքը բաներ: Ես չեմ զարմանում, դա է ծրագիրը: Այդ չկայացվածության ատելությունն է, այդ խումբը՝ քայլիստներն ու քայլուհիները, որ զրոներ են՝ մարդկային և մասնագիտական:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 80 (4215), 20 մայիս, չորեքշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Երեկ, վաղ առավոտյան Փաշինյանին պատկանող լրատվամիջոցն ավետեց, որ Երեւանի մոտ 15 հասցեներում խուզարկություններ են իրականացվում: Իրավապահներն օրվա ընթացքում չմանրամասնեցին՝ ինչ քրեական գործով են խուզարկում մարդկանց բնակարանները: Լուրեր տարածվեցին, որ խուզարկության պատճառը Փաշինյանի նախօրեին հրապարակած «մասկաներով ահաբեկիչների» տեսագրությունն է՝ զենք-զինամթերք են փնտրում: Արցախի դրոշի ֆոնին՝ դիմակներով եւ ավտոմատներով զինված 5 անձ Արցախի բարբառով դիմում են Փաշինյանին՝ նշելով, որ գիտեն նրա գտնվելու վայրերը եւ պատժելու են: Տեսանյութը ցնցումների մեջ գցեց Փաշինյանին, նա Արաբկիրում քարոզարշավի ժամանակ անդրադարձավ դրան, ասաց, որ այդ փախած լակոտներին հայտնաբերելու է, «մասկաները եւ ավտոմատների կոթերը համապատասխան տեղերն է մտցնելու»: ՔԿ-ն էլ շտապ քրեական վարույթ հարուցեց՝ «Մի խումբ անձանց կողմից սպանության նախապատրաստության, համակարգչային սաբոտաժ կատարելու եւ հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի առթիվ»: Չնայած փորձում են լրջացնել այդ տեսանյութը՝ իբր Փաշինյանի կյանքին են սպառնում, սակայն շատերը համոզված են, որ դա իշխանությունների ձեռքի գործն է, կազմակերպել են՝ լեգիտիմացնելու ընդդիմադիրների նկատմամբ կիրառվելիք հետապնդումները: Իրավապահ մեր աղբյուրները հայտնում են, որ արդեն հրահանգ են ստացել՝ համատարած ձերբակալություններ իրականացնել եւ ընդդիմադիր ակտիվիստներին «փակել», քանի որ հարցումները ցույց են տալիս, որ ՔՊ-ի վիճակը ծանր է, ուստի պետք է ընդդիմությանը թուլացնել:

Իշխանականները խաղաղ քարոզարշավը վերածեցին «ռազբորկաների» եւ անգամ իրենց ընդդիմացող անչափահասների հետ են ընդհարվում: Նախօրեին նման միջադեպ է գրանցվել Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում: ՔՊ քարոզիչների՝ դռնեդուռ քարոզի ժամանակ անչափահաս՝ 16-ամյա մի տղա, բակի զրուցարանում նստած, իր անհամաձայնությունն է բարձրաձայն հայտնել ՔՊ-ի լոզունգները բացականչողների ուղղությամբ: Նրան են մոտեցել թաղապետարանի առեւտրի բաժնի աշխատակիցները՝ հասուն տղամարդիկ, հորդորել են, որ «խելոք սթրվի տեղը», ապա խոստացել են, որ հետո գալու են նրա ետեւից: Տղայի շրջապատն անհանգստացած է, որ ընտրություններից հետո համարձակ տղայի նկատմամբ էլ հաշվեհարդար կտեսնեն:

Նորմալ երկրներում

Պարտադիր չէ, որ անձամբ ձեզ «համբալ» անվանեն, որպեսզի ընդվզեք. նորմալ մարդիկ ընդվզում են նաեւ այն ժամանակ, երբ ուրիշներին են իրենց ներկայությամբ «համբալ» անվանում: Մանավանդ՝ եթե ասողը երկրի թիվ 1 պաշտոնյան է: Պարտադիր չէ, որ ձեզ «ստահակ» անվանեն, ասեն՝ «կզըցնելու եմ», «սատկացնելու եմ», չգիտեմ ինչը չգիտեմ որտեղ եմ մտցնելու: Բարեկիրթ մարդիկ ոչ միայն իրենք նման լեքսիկոն չեն կիրառում, այլեւ թույլ չեն տալիս, որ իրենց ներկայությամբ մեկ ուրիշը կիրառի: Նորմալ քաղաքացիները կվրդովվեին, եթե իրենց երկրի նախկին պաշտոնյաների հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեին, անկախ նրանից՝ այդ պաշտոնյաներին սիրում են, թե՝ մերժում: Կիրթ մարդիկ նաեւ թույլ չէին տա, որ իշխանություններին քննադատող մարդկանց բերանը ծեփեին, բանտ ուղարկեին՝ վարչապետի պաշտոնը զբաղեցնողին քննադատելու համար: Գրագետ, լավ քաղաքացիներն ամեն կերպ կպայքարեին այն պաշտոնյաների ու այն իշխանության դեմ, որն իր հայրենակիցներին, անկախ նրանից՝ արցախցի են, ռուսաստանցի, սիրիացի, թե ֆրանսիացի, անպատվում է, «փախած» է անվանում: Նորմալ մարդիկ կմերժեին, կվռնդեին այն պաշտոնյային, ով կհամարձակվեր որեւէ մեկի վրա բղավել՝ «ինչո՞ւ չես զոհվել պատերազմում, ինչո՞ւ ես կենդանի մնացել»: Նորմալ երկրներում, իհարկե, նման պաշտոնյաներ չէին լինի, որովհետեւ հասարակությունը թույլ չէր տա նման գռեհիկ, չար, հոգեպես անհավասարակշիռ անձանց՝ հասնել այդ կարգավիճակին: Իսկ եթե հանկարծ նմաններն ինչ-որ կերպ սպրդեին ու հասնեին հանրային միջոցներից սնվող որեւէ պաշտոնի, նման մի դրսեւորումը բավական կլիներ, որ ողջ հասարակությունը դուրս գար փողոց ու սուլոցներով դրանց նմաններին ճանապարհեր տուն: Հայաստանում դուրս չեն գալիս, որովհետեւ տուն ճանապարհելու օրը հունիսի 7-ն է:

Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը երեկ երկրորդ շառաչուն ապտակը ստացան Տաշիր համայնքում: Օրեր առաջ Սուրեն Պապիկյանի անհաջող քարոզարշավը խմբագրելու՝ ռեւանշ վերցնելու նպատակով ՔՊ շրջիկ խմբակի հետ Լոռի՝ Տաշիր մեկնած Փաշինյանը երեկ մինի հանրահավաք-ելույթ ունեցավ կիսադատարկ հրապարակում: Չնայած Երեւանից մի քանի ավտոբուս մարդ էին իրենց հետ տարել, որ նկարեն, ցուցադրեն, թե հրապարակը լիքն է, սակայն Սամվել Կարապետյանի հայրենակից տաշիրցիներն ինչպես Պապիկյանին էին օրեր առաջ մերժել, նույնն արեցին նաեւ Նիկոլ Փաշինյանի հանդեպ:

ՀԱՎՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԱՏԵԼ ԵՆ ՊԱՇՏՈՆԻՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 2023թ. հոկտեմբերի 19-ին Արթուր Մելիքյանին նշանակել է Այգեձորի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Իսկ մայիսի 14-ին Բերդ համայնքում «Ուժեղ Հայաստան» դաշինքի հանրահավաքին ներկա լինելու համար Մելիքյանին ազատել են պաշտոնից: Մելիքյանին հարցրինք՝ ճի՞շտ է, որ «Ուժեղ Հայաստանի» հավաքին ներկա լինելու համար են իրեն պաշտոնից ազատել, ասաց՝ ճիշտ չէ, ինքն ավելի շուտ է աշխատանքից ազատվել: Ե՞րբ: «Վաղուց»: Խնդրեցինք օրը նշել, ասաց՝ «չեմ հիշում»: Նրա խոսելու տոնից կարելի էր ենթադրել, որ վախեցած է, կաշկանդված: Զանգահարեցինք Այգեձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Հայկ Ծաղկյանին, հետաքրքրվեցինք՝ ե՞րբ է աշխատանքից ազատվել Արթուր Մելիքյանը: Պատասխանեց՝ մայիսի 14-ին, եւ հավելեց, որ վարչատնտեսական մասի համակարգողին մարզպետն է նշանակում եւ ազատում, ինքը չգիտի, թե ինչու են պաշտոնից ազատել: Նախընտրական քարոզչությանը մասնակցելու համար Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մայիսի 8-ից արձակուրդ է վերցրել, նրան փոխարինում է մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում հրապարակվում են մարզպետի եւ նրան փոխարինողի որոշումները: Մարզպետարանի կայքում մարզպետին փոխարինող, մարզպետի տեղակալ Ն. Ղուշչյանի միակ եւ վերջին որոշումը հրապարակված է մայիսի 11-ի ամսաթվով, կայքում Ա. Մելիքյանին աշխատանքից ազատելու որոշում չկա: Մինչդեռ պաշտոնական որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման պահից:

ՎԵՃ

Ա՛յդ կրկեսի մեյմունին՝ նախարար, մյուսին էլ վարչապետ անվանելը վիրավորական է

Անեծքներ, սպառնալիք, գոռգոռոց. Նիկոլ Փաշինյանը հիստերիայի ու գերդոզավորված ատելության խոսքի մաստեր կլաս է ցուցադրում: «Քաղաքում սատանա կա», «դեղերն էսօր չի խմել», «ճրբ ենք ազատվելու էս տեսարաններից». այսպես են արձագանքում օգտատերերը նրա անհավասարակշիռ պահվածքին: «Եթե Դուք Ռոբն եք, մենք ձեզ կզացնելու ենք: Ռոբին կզացրել եմ եւ կզացնելու եմ»,- իրեն քննադատած կնոջ

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

վրա Արաբկիրում բղավում էր քարոզարշավ անող Նիկոլ Փաշինյանը:

Արաբկիրում նրան մոտեցած կինն ընդամենը ասել էր՝ ես հայ եմ. «Աստծուն շնորհակալ եմ, որ հնարավորություն ընձեռեց այսքան մոտիկ տարածությունից նայեմ Ձեր աչքերի մեջ ու ասեմ, որ Դուք գողացել եք իմ հայրենիքը, շարունակում եք գողանալ իմ հայրենիքը: Դուք իմ ազգի մի ամբողջ երիտասարդ սերունդ եք ոչնչացրել, Դուք գողացել եք իմ եղբորը, իմ երեխեքին, իմ ուրախությունը: Դուք փորձեցիք մեզ կզացնել, բայց Դուք եք կզել: Դուք գիտեք քանի բարձրաստիճան սպա անհետ կորած ունենք:... Ութ տարի մի լավ բան անեիք, առողջապահության ապահովագրությունն էլ իմ հաշվին եք արել»: Տեղի ունեցածից հետո պարզվեց, որ տիկինը Երեւանի թիվ 16 պոլիկլինիկայում է աշխատում՝ գինեկոլոգ, բժշկական գիտությունների թեկնածու Արփինե Սողոյանն է, 44-օրյա պատերազմում անհետ կորած բժիշկ, բարձրաստիճան սպա Հրանտ Պապիկյանի քույրը: Դեպքից հետո տեղեկություն տարածվեց, որ քաղաքապետարանից պոլիկլինիկայի տնօրենին հրահանգել են՝ նրան ազատել աշխատանքից, տնօրենն ասել է՝ դիմում գրի, տիկինը հրաժարվել է, տնօրենը որոշել է գրավոր նկատողություն տալ: Մենք զրուցել ենք **Արփինե Սողոյանի** հետ:

- Ձեր դուստրը՝ փաստաբան Տաթեւիկ Սողոյանը հայտնեց, որ դատարան դիմելու անհրաժեշտություն չի տեսնում, չնայած Փաշինյանը քաշքշել էր Ձեզ, սպառնալիքներ տեղացել: Համաձայն եք Ձեր դստեր հետ, որ չարժե դատական հայց եւ պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնել: ՔՊ-ականներն ամեն պատեհ-անպատեհ առիթով դատարան են դիմում:

- Ինչի՞ կհասնենք, եթե դատարան դիմենք: Միեւնույն է՝ Նիկոլի դատավորները չեն քննելու այդ գործը, իսկ մեր նպատակը Նիկոլին մեր երկրից վռնդելն է: Հիմա եթե ես դատի տամ Նիկոլին, դա կլինի ժամանակի կորուստ, ավելի լավ է՝ մեր ուժերը, մեր էներգիան ներդնենք, դրան քշենք, պրծնենք էդ չարիքից: Այն, ինչ Նիկոլն արեց երկուշաբթի օրը, դա իր գործած հանցագործություններից ամենաբարին էր, նա ավելի գլոբալ հանցագործություններ է կատարել, եւ օրը գալու է, պատասխան է տալու այդ ամենի համար: Անիմաստ եմ համարում Նիկոլին դատի տալը, նա ամբողջ իրավական համակարգն իր ձեռքն է վերցրել, չկա արդարադատություն, մեր աչքի առաջ սրբազաններին են դատում՝ ոչ մի բանի համար: Նայում ես նրանց դատական նիստերը, ուղղակի ապշում ես: Իրավիճակը ծիծաղելի կլիներ, եթե չլիներ այդքան ողբերգական: Դատարկ տարածության մեջ՝ առանց պատճառի սրբազաններին են պահում, նման դատական համակարգից ինչ լավ բան կարելի է սպասել եւ դեռ մի բան էլ՝ դատական հայց ներկայացնել: Մենք մեկ գերնպատակ ունենք այսօր՝ Նիկոլին ու իր ոհմակին քշել, եւ վերջ: Այ, դրանից հետո Նիկոլին Գինեսի գրքում են գրանցելու՝ որպես ամենաշատ հանցանքներ գործած արարածի:

- Ինչո՞ւ է Ձեզ նկատողություն տվել պոլիկլինիկայի տնօրենը: Աշխատանքի ժամին էիք Փաշինյանի քարոզարշավին գնացել:

- Այո, ժամը 10:00-ին ես պետք է աշխատանքի ներկայանայի, սակայն ներկայացա 10:30-ին: Այդ հանդիպումը պատահական չէր, ես գիտեի, որ նա գալու է: Պարեկներից իմացա, որ նա գալիս է իմ շենքի մոտ քարոզարշավի եւ նպատակային պատրաստվեցի, որ ես էլ մասնակցեմ: Հետո տնօրենին ներկայացրի, գրեցի, որ աշխատանքից ուշացել եմ՝ խիստ անձնական պատճառներով, իսկ արարքս չցանկացա մեկնաբանել: Նկատողություն ստացել եմ, սակայն ես ավելի ծանր սցենարների էլ էի պատրաստ ու ոչ մի բանից չեմ նեղվում:

- Ստիպե՞լ են Ձեզ ազատման դիմում գրել:

- Նման խոսակցություններ եղել են, սակայն դրանք անցան-գնացին, ոչ մի ընթացք չստացավ:

- Իսկ նկատողությունը չե՞ք ցանկանում բողոքարկել դատական կարգով:

- Չէ, ես իմ ժամանակն ու էներգիան միայն մեկ ուղղությամբ եմ աշխատեցնում՝ քշել Նիկոլին:

- Ի դեպ, երբ Փաշինյանը սպառնալիքներ էր տեղում, առողջապահության նախարարը գլխով հավանության նշան էր ցույց տալիս:

- Որովհետեւ նա Նիկոլի խամաճիկն է, ինչ ասես նմանին: Մի առողջապահության նախարար, որ ամբողջ օրը փողոցներում պարի, էլ չեմ ասում, որ դա կնոջը սազական չէ, ինչ ասես էլ նրա մասին: Ես այնպիսի նախարարներ եմ տեսել իմ կյանքում, որ անգամ ինձ համար, որպես ՀՀ քաղաքացի, խիստ վիրավորական է նման մեկին, այդ կրկեսի մեյմունին անվանել նախարար, դա շատ վիրավորական է, ինչպես որ Նիկոլի նման մեկին վարչապետ անվանելն է վիրավորական: Օրինաչափ է նման նախարարներ ունենալն այսօր: Նիկոլի վարչապետության ժամանակ չեն կարող ավելի խելացի, ավելի լուրջ կամ ավելի պետականամետ անձանց պաշտոնների նշանակել: Դրա համար պետք է այդ ոհմակը քշել:

- Իսկ շա՞տ մարդ կար Ձեր թաղամասից՝ այդ հավաքին:

- Մեր թաղամասից 10-15 մարդ էր միայն:

- Համացանցում Ձեզ հերոսացնում էին, անգամ գրում էին, որ այն, ինչ չի արել ընդդիմությունն այս հինգ տարվա մեջ, Դուք արեցիք մի րոպեում: Իսկ բացասական կարծիքներ լսե՞լ եք Ձեր մասին:

- Ես չեմ կարծում, որ ես հերոս եմ, պետք չէ մեր հերոսների գործը նսեմացնել: Վատ մեկնաբանություններ էլ կլինեն, ես մեկ-երկու նման մեկնաբանություն տեսա, սակայն դրանք ինձ վրա չեն ազդում, ես ունեմ գերնպատակ, ես գիտեմ, թե ինչ եմ ուզում, եւ գնում եմ այդ ուղղությամբ:

Հազար սնարյադ է պայթել աչքիս առաջ, ի՞նչ անեմ, որ չեմ զոհվել

Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը որոշել են ագրեսիվ ձեւով թիրախավորել բռնի տեղահանված, տնից ու հայրենիքից զրկված արցախցիներին, նրանց նկատմամբ ատելության խոսք կիրառել եւ նրանց մեղադրել իրենց հայրենիքի կորստի համար: Համացանցում ինչ-որ անհայտ տեսանյութ է հրապարակվել, որում դիմակավորված անձինք իբրեւ թե Արցախի բարբառով Նիկոլ Փաշինյանի հասցեին սպառնալիքներ են հնչեցնում: Այդ տեսանյութը ոչ մի լրատվամիջոց չի տարածել, բացի ՔՊ-ին առնչվող լրատվամիջոցներից ու ՔՊ անդամներից: Թե որքանով է այդ տեսանյութն իրական, ով է այն նկարահանել, ինչ նպատակով, արցախցինե՞րն են խոսում, թե՞ հատուկ արցախցիների բարբառով են խոսում, անհայտ է: ՔՊ-ն ինֆորմացիոն առիթ է ստացել՝ ողջ թիմով արցախցիների դեմ նորից գրոհ սկսելու համար: Քանի օր է՝ ՔՊ-ական բետեռները ֆեյսբուքյան լայվերի ու գրառումների միջոցով արցախցիներին են թիրախավորում: Սա էլ, կարծես, քիչ էր, Նիկոլ Փաշինյանը Երեւանի փողոցներում արցախցիների հետ է ընդհարվում: Իսկ արցախցի Արտուր Օսիպյանը, որը նախկինում ջերմեռանդ նիկոլական էր եւ ակցիաներ էր կազմակերպում Արցախի նախագահ Շահրամանյանի դեմ, վերջին հայհոյանքներն էր տեղում Ռուբեն Վարդանյանի հասցեին, հայտնվեց անհավասարակշիռ վարչապետի թիրախում, ապա ձերբակալվեց: Նիկոլ Փաշինյանն այնքան հունից դուրս եկավ, որ սկսեց ափսոսանք հայտնել, թե ինչու Օսիպյանը չի զոհվել: «Ինչո՞ւ չես զոհվել, բա գնայիր զոհվեիր, խի՞ ես կենդանի»,- բղավում էր նա՝ մոռանալով, որ իր թիմում հիմա «չզոհված» արցախցիներ են աշխատում, օրինակ՝ ԱԽՔ Արմեն Գրիգորյանը, ՀՈՒ ԳՇ պետը եւ այլք: Ինչո՞ւ է ռեժիմը կրկին թիրախավորել արցախցիներին: Զրուցել ենք Շուշիի քաղաքապետ **Արծվիկ Սարգսյանի** հետ:

- Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը ասում են, որ արցախցիներն ահաբեկիչներ են՝ փորձել են ահաբեկչություն իրականացնել Փաշինյանի դեմ: Հավատո՞ւմ եք այդ մեղադրանքներին:

- Ազգի պառակտման նոր ձեւ է սա: Պետք է պարզել, թե ով կամ ովքեր են այդ ամենի կազմակերպման ետեւում կանգնած, թեպետ ես մոտավորապես գլխի եմ ընկնում, թե ում ձեռագիրն է: Մեր հայ ազգն այնքան էլ մեծ ազգ չէ, եւ չի կարելի նման ձեւով ազգը հերթական անգամ պառակտել: Ընտրություններից հետո էլ կյանք կա, չի կարելի: Լավ կլինի, որ իրար երես նայելու տեղ թողնեն: Մանավանդ որ արցախցիների վիճակը վատ է, տուն-տեղ ենք կորցրել, ամեն ինչ թողել ենք այնտեղ, հիմա հերթական լարվածությունն են փորձում առաջացնել: Ինձ երբեմն թվում է, թե այս ամենն Ադրբեջանի կողմից է ֆինանսավորվում եւ իրականացվում:

- Հատկապես իշխանությունն է այդ ձայնագրությունները տարածում եւ արցախցիների դեմ ատելություն սերմանում:

- Դե, իրենց ձեռնտու է լարվածություն ստեղծելը: Սրանք կեղտոտ խաղեր են, որոնց չի կարելի տուրք տալ: Այն մեր ազգին վնասում է: Վաղը կվերանա այս մթությունը, նորից լույս կբացվի, եւ ես դեմ եմ, որ այսպես ազգին պառակտում են:

- Նիկոլ Փաշինյանը 5 հազար զոհ տալուց հետո ափսոսում է, որ բոլոր արցախցի տղամարդիկ չեն զոհվել՝ դեռ ապրողներ կան: Նա Արտուր Օսիպյանին ասում էր՝ ինչո՞ւ չես զոհվել:

- Ես այդ տղային ճանաչում եմ, նա միշտ ընդդիմություն է եղել: Ես նրա խոսքում ոչ մի ավելորդ բան չտեսա: Ուղղակի պատմում էր, թե ինչեր են տեղի ունեցել Արցախում, բայց վերջում ինչ ասես՝ ասաց այդ տղային, անեծքներ տվեց, չի կարելի…. չի կարելի նման խոսքեր ասել, կռվի ժամանակ պետք է հաշտության տեղ թողնել, չի կարելի կամուրջներն այրել անվերադարձ: Ճակատագիր է, մահացողները մահացան, ապրողներն էլ ապրում են: Ո՞վ էր ուզում, որ իր հարազատը զոհվի: Օրինակ՝ իմ եղբայրը զոհվեց, ո՞վ կուզենար, որ նա զոհվեր: Կռիվ էր, մի մասը զոհվեց, մի մասը՝ բախտի բերմամբ, թե պատահմամբ, ողջ մնաց, ես էլ ողջ եմ մնացել, ու ինչ: Ո՛չ փախել ենք, ո՛չ վախեցել ենք, միշտ էլ թուրքի առաջ կանգնել ենք ու պատրաստ ենք եղել կռվելու: Հիմա ինչ անենք: Հազար սնարյադ է պայթել աչքիս առաջ, ինչ անեմ, որ չեմ զոհվել: Մի քանի անգամ վիրավորվել եմ, բայց չեմ մահացել: Դե հիմա էդպես է ստացվել, ես ինչ անեմ, իմ ճակատագիրն էլ այդպես էր: Տղայիս մոտ էլ լիքը սնարյադներ են պայթել, կողքի տղաները զոհվել են, ինքը՝ չէ: Ամեն մեկի ճակատին մի բան է գրված եղել: Քոռ գյուլլեն որ գալիս է, ոչ մեկի անեծքին ուշադրություն չի դարձնում: Անեծքը սատանայական բան է, մարդու մահը ցանկանալը՝ եւս:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՆՈՒՅՆ ՁԵՎՈՎ ԱՅԴ ԳԻՇԵՐՆ ԻՄ ՁԵՌՔՆ ԷՐ ԲՌՆԵԼ ՈՒ ՉԷՐ ԹՈՂՆՈՒՄ, ՈՐ ԳՆԱՅԻ

Դանրային վայրում բացահայտ անպարկեշտ, հայհոյախառն բառապաշարի եւ սպառնալիքների կիրառումը խուլիգանություն է: «Իսկ երբ առկա են ֆիզիկական բռնության տարրեր ու կոչեր եւ պաշտոնական դիրքի ակնհայտ չարաշահում, արարքը դառնում է քրեաիրավական գնահատականի հստակ հիմք»,- ՔՊ քարոզարշավի ժամանակ Փաշինյանի անհավասարակշիռ պահվածքն Արաբկիրում երեկ այսպես է իր էջում բնութագրել իրավապաշտպան Զարուհի Փոստանջյանը:

Պարզվում է՝ հենց Զարուհու տան մոտ է Փաշինյանն իր քարոզն իրականացրել: Նրան տեսնելով՝ վարչապետը սկսել է բղավել. «Ստահակ, դու Սերժ ես, դու Ռոբ ես» եւ այլն: Թեեւ, ինչպես իրավացիորեն նկատում է Էդմոն Մարուքյանը, ոչ ոք Զարուհուց շատ չի քննադատել Սերժին ու Ռոբին:

«Ես մեր տան մոտ էի, նա այնտեղ քարոզարշավ էր անում, հեռու էի, չեմ լսել, թե ինքն ինչ է գոռում, հետո տեսանյութով եմ տեսել: Բայց նա ինձ տեսել է, սկսել է գոռգոռալ»,- պատմում է Փոստանջյանը: Այլ կերպ ասած՝ նա կարմիր կտորի դեր է կատարել կատաղած ցլի համար: Բայց ինչ է եղել ի սկզբանե, ինչո՞ւ է այսչափ հունից դուրս գալիս Փաշինյանը՝ իրեն տեսնելով, գուցե ինչ-որ պատճա՞ռ կա: «Չեմ կարող ասել հստակ: Երեւի, որովհետեւ տեսել եմ իրեն վատ վիճակներում, հիստերիայի մեջ ընկած: Եղել է, որ առաջարկել է իր հետ «Ելք» դաշինքով հանդես գալ, հիշո՞ւմ եք, ես մերժել եմ, գուցե դրանից է, գուցե՝ 16 տարի առաջվա դեպքերից»: Եվ պատմում է, որ 16 տարի առաջ՝ 2010 թվականին, երբ Փաշինյանը «Կոշ» ՔԿՀ-ում էր, իրեն գիշերով զանգահարել է Աննա Հակոբյանը, թե դիմակավորված անձինք հարձակում են գործել՝ ամուսինը ահավոր վիճակում է: «Ես այդ պահին երեխայիս կրծքով կերակրում էի: Այդ ժամանակ փաստաբաններն իրավունք չունեին մուտք գործել մեկուսարանի տարածք, օրենքը թույլ չէր տալիս: Նրա փաստաբանները չէին կարողացել գնալ, միայն պատգամավորներին էին թույլ տալիս: Կինն ասաց՝ խնդրում եմ, էլի, անպայման գնանք, ես կգամ քո հետեւից: Էնպես խոսեց, որ ընտրություն չունեի, երբ նման բան են ասում, չես կարողանում մերժել: Գնացինք, ամբողջ գիշեր այնտեղ ենք եղել»,- վերհիշում է Զարուհի Փոստանջյանը մեզ հետ զրույցում:

Նա ասում է, որ Փաշինյանը չի մանրամասնել, թե ինչ հարձակում է եղել, ովքեր են եղել, ինչ են արել իրեն: «Էն բառերը, որ երեկ գոռգոռում էր, նույնը այն ժամանակ էր գոռգոռում՝ ուզում եք էս անեք, ուզում եք էն անեք, ձեռքիցս քաշում էր, չէր թողնում, որ դուրս գամ խցից: Ընդամենը գոռում էր, որ իր վրա հարձակվել են դիմակավորված անձինք, ծեծել են, ուզել են սպանել: Իր խնդիրն այն էր, որ իրեն չթողնեն «Կոշում», տեղափոխեն այլ քրեակատարողական հիմնարկ, եւ այդպես էլ եղավ: Մենք մնացինք մինչեւ լույս, ու դրանից հետո նրան տեղափոխեցին «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ»,- պատմեց Փոստանջյանը:

Մեր հարցին, թե հնարավո՞ր է՝ խաբում էր, մանիպուլացնում էր ձեզ, պարզապես ուզում էր տեղափոխվել այլ ՔԿՀ, պատասխանեց. «Ես ի՞նչ իմանամ, ինքը կիմանա, պետք է իրենից հարցնել»: Մայիսի 18-ին Փաշինյանի հունից դուրս գալը զայրացրել է իրավապաշտպանին: Նա իր ֆեյսբուքյան էջում վերլուծել է վարչապետի վարքագծի պատճառները՝ նշելով, որ դա գալիս է անցյալի վախերից, ենթագիտակցական բարդույթներից, սեփական անխոցելիության զգացողության կորստից, ներքին խուճապից՝ քաղաքացիների քննադատության հետեւանքով, «Կոշ» ՔԿՀ-ում իրեն «կզըցնելու», «չոքըցնելու» եւ համապատասխան տեղը «կոխելու» իրական սպառնալիքներն են դեր խաղացել: Այս բառապաշարը փաստաբանն այդ բարդույթներով է բացատրում: Նա Փաշինյանին անվանում է «քաղաքական դիջեյ», «փողոցային Շարիկով», որի հանձնարարությունը՝ կատուներ ոչնչացնելը, այլեւս պահանջված չէ:

«Հայտնվելով սուր սթրեսի մեջ եւ բախվելով անզեն կնոջ երկաթյա ու անպատասխանելի հարցադրումներին՝ նա անճարությունից անցավ ֆիզիկական ճնշման՝ քաշելով կնոջ թեւից, եւ պայթեց հիստերիկ, հայհոյախառն բղավոցներով՝ կզըցնելու եմ, չոքըցնելու եմ, կոխելու եմ»,- գրել է Զարուհի Փոստանջյանը:

Հարցին, թե ինչն է Փաշինյանի պահվածքում ամենաշատն իրեն զայրացրել, փաստաբանը պատասխանում է. «Ֆիզիկական հպումը մարդուն, օտար կնոջն անթույլատրելի է: Ինչ ծայրահեղ վիճակում պետք է նա լինի, որ կպչի օտար կնոջը: Նույն ձեւով այդ գիշերը, Կոշի բանտում նա իմ ձեռքն էր բռնել ու չէր թողնում, որ գնայի»: Ի դեպ, 2010 թվականին այն ժամանակ քաղբանտարկյալ Նիկոլ Փաշինյանի վրա դիմակավոր անձանց հարձակման վերաբերյալ քրեական վարույթը 2020 թվականին վերսկսվել էր՝ հավանաբար, հենց Փաշինյանի պահանջով: Ճիշտ է, նա այլ կերպ է դա ներկայացնում:

«2010թ.-ին «Կոշ» ՔԿՀ-ում դիմակավորված անձինք ինձ վրա հարձակում էին գործել: Ճիշտն ասած, երբ ես դարձա վարչապետ, հիշեցի այդ գործի մասին: Մտածում էի՝ ես հիմա այս գործով պե՞տք է հետաքրքրվեմ, թե՞ չհետաքրքրվեմ: Հետո մտածեցի, որ ամոթ է, հիմա էլ պիտի ասեն՝ սկսել է իր անձնական գործերով զբաղվել»,- պատմել էր Փաշինյանը 2020-ին: Ըստ նրա, մի քաղաքացի հայտնել է, որ տեղյակ է՝ ով է այդ հարձակումը կազմակերպել, դիմում է գրել, գնացել է ցուցմունք տալու:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Թե ինչ եղավ այդ գործի ճակատագիրը, դատախազությունը չի հայտնում, գրավոր հարցում են պահանջում: Հայտնի է, որ 2020 թվականին այս գործով հարցաքննել էին այն ժամանակվա «Կոշ» քրեակատարողական հիմնարկի ղեկավար, լուսահոգի Լյովա Բաղդասարյանին: Մեր տեղեկություններով, նա ասել էր, որ որեւէ կապ չունի եւ չի կարող ունենալ այդ դեպքի հետ: Նրան մեղադրանք չի առաջադրվել: Չի բացառվում, որ հարձակում չի եղել:

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿ ԷԼ ԿԱՅԻՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐ, ԲԱՅՑ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՀՈ ՉԷԻ՞ՆՔ ԱԶԱՏՈՒՄ ՄԱՐԴՈՒՆ

ՔՊ-ի ուրախ ավտոբուսի ամենաակտիվ ուղեւորը՝ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, հավակնում է դառնալ Նիկոլ Փաշինյանի թիվ 1 հանցակիցը: Նա ոչ միայն արձակուրդ է վերցրել ու Փաշինյանին կրնկակոխ հետեւելով ակտիվ քարոզարշավի է մասնակցում, այլեւ, լինելով ամենամարդասիրական ոլորտի ղեկավար, Փաշինյանի հայտարարած մարդատյացության մարաթոնում ակտիվ դերակատարում է ստանձնել: Նա իր պարտքն է համարում «այո» բացականչություններով, գլխի ու մարմնի ողջ հավանությամբ իր աջակցությունը բերել Փաշինյանի՝ մարդկանց «ոչնչացնելու», «կզըցնելու» եւ այլ սպառնալից հայտարարություններին: Մարդկանց պատիվն ու արժանապատվությունը ստորացնող, վիրավորական արտահայտությունների ժամանակ նա ոգեւորում է Փաշինյանի հախուռն եւ անհավասարակշիռ պահվածքը: Տիկինն այնքան է տարվել նախընտրական քարոզչությամբ, որ սկսել է լայվեր անել «ղարաբաղյան կլանի», ընդդիմադիրների վերաբերյալ, իսկ նախօրեին Արաբկիրում Փաշինյանի հետ վիճած վաստակաշատ բժշկուհուն՝ Երեւանի թիվ 16 պոլիկլինիկայի 20 տարվա աշխատակցին ներկայացրել է որպես սադրիչ ու ղարաբաղյան կլանի ներկայացուցիչ: «Ղարաբաղյան կլանի թալանչիներ, դուք կապ չեք ունեցել եւ չունեք ո՛չ ղարաբաղցու, ո՛չ հայաստանաբնակ քաղաքացու իրական հոգսի հետ: Հերի՞ք է ուրիշի երեխաների հաշվին ձեզ համար կապիտալ կուտակեք: Չի՛ ստացվելու: Սադրիչ ուղարկելն էլ, հատկապես կնոջ տեսքով, մեղմ ասած, սիրուն չի»,- իր բոցաշունչ լայվում հոխորտացել է տիկինը: Հետո լուրեր տարածվեցին, որ քաղաքապետարանից հրահանգել են տիկնոջը՝ ազատման դիմում գրել, ապա, հավանաբար խուսափելով աղմուկից, բավարարվեցին նկատողությունով՝ իբրեւ թե Աշխատանքային օրենսգրքի պահանջները խախտելու համար:

Մենք չենք հիշում, որ Հայաստանի առողջապահության նախկին նախարարներից որեւէ մեկն այսպիսի ակտիվություն դրսեւորեր նախընտրական քարոզարշավների ընթացքում, չնայած այն իրողությանը, որ նախարարի պաշտոնը քաղաքական է, բայց ելնելով ոլորտի առանձնահատկություններից, առողջապահության նախարարները մշտապես ավելի բարձր դիրքերում են մնացել: 2012-ին առողջապահության ոլորտը 2 տարի ղեկավարած Դերենիկ Դումանյանը չի հիշում որեւէ առողջապահության նախարարի, որն ակտիվ ներգրավված լիներ նախընտրական քարոզարշավին: Նա եւս ընդգծեց, որ թեեւ նախարարի պաշտոնը քաղաքական է, բայց ցանկացած նախարարի անձնական նախընտրության հարցն է: «Մեկն ավելի շատ իր աշխատանքն է սիրում, մեկը՝ քաղաքական դիրքը: Իհարկե, նախարարները կարող են մասնակցել քարոզարշավին, բայց նախընտրության հարց է, եւ կարծում եմ՝ ակտիվ մասնակցողներին է պետք հարցնել իրենց մասնակցության մոտիվի մասին, գուցե նաեւ քաղաքական թիմն է այդպես պահանջում»,- մեզ ասաց Դումանյանը: Եթե անգամ պահանջում են մասնակցել քարոզարշավին, կարելի՞ է արդյոք անխտիր հավանության արժանացնել բռնության, վիրավորանքի բոլոր խոսքերը, որ հնչեցնում է Փաշինյանը: «Առողջապահության նախարարը, իմ կարծիքով, ավելի գթասիրտ մարդ պետք է լինի եւ դեմ՝ ցանկացած բռնության, ես այսքանը կարող եմ ասել»: Խոսելով 16-րդ պոլիկլինիկայի բժշկուհի Արփինե Սողոյանին պատժելու մասին՝ Դումանյանն ասաց, որ այդ միջադեպը չի կարող պատճառ դառնալ նրան հեռացնելու համար, տիկինն իր քաղաքական, քաղաքացիական դիրքորոշումն է հայտնել, եւ դա չի խանգարում իր աշխատանքային գործունեությանը: Հարցրինք՝ ժամանակին ՀՀԿ-ի ցուցումով քանի՞ անհնազանդ, ընդդիմադիր աշխատակցի է հրահանգել ազատել աշխատանքից: Դումանյանը վստահեցրեց. «Ոչ մի: Մեր ժամանակ էլ կային ընդդիմադիրներ, հենց մեր դիմաց հայտնում էին այդ մասին, բայց դրա համար հո չէի՞նք ազատելու մարդուն: Մարդուն աշխատանքի ընդունում եւ ազատում են իր պրոֆեսիոնալ, մասնագիտական կարողություններին, ոչ թե քաղաքական հայացքներին համար: Ես ճիշտ չեմ համարում, որ մարդուն պետք է ազատեն այդ միջադեպի համար: Նույնն էլ՝ նկատողություն տալը: Եթե նա աշխատանքում թերացել է, իհարկե, կարող են նկատողություն հայտնել ու հեռացնել, բայց եթե պետք է քաղաքական հայացքների համար նկատողություն տան, իրավաբաններն էլ կասեն, որ դա չի կարելի»: Հիմա հիմնավորում են, որ աշխատանքից բացակայել է: «Աշխատանքից անհարգելի բացակայություն, իհարկե, չի կարելի, բայց չեմ էլ կարծում, որ դա նկատողության հարց է, հատկապես որ առաջին անգամ է նման բան տեղի ունենում: Եթե կրկնվում է, այո, կարելի է նկատողություն տալ, զգուշացնել, որ չի կարելի, առավել եւս՝ եթե որեւէ հիվանդ դրա պատճառով տուժել է»,- ասաց նախկին նախարարը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՎԵՀԱՓԱՌԻ ՄԱՍԻՆ ՏԱՐԻՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ՏԱՐԱԾՎՈՂ ՄԻՖԵՐԸ ՈՐԵՎԷ ԱՂԵՐՍ ՉՈՒՆԵՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

*Մայիսի 16-ին մի խումբ մտավորականներ Մայր Աթոռում հանդիպել էին Վեհափառի հետ: Կազմակերպիչը Երեւանի մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ **Ժիրայր Դադասյանն** է: Մենք զրուցել ենք նրա հետ:*

- Ո՞րն էր հանդիպման նպատակը:

- Կարծում եմ՝ այդ անհրաժեշտությունն այնքան ակնհայտ է այսօրվա իրողությունների, թոհուբոհի մեջ, երբ որ մեծ հարվածներ են ստանում նաեւ մտավորականները եւ ասում են՝ ինչու են լռում, չեն խոսում, չեն արձագանքում այն ամենին, ինչ տեղի է ունենում այսօր մեր շուրջ: Ես մտածեցի՝ հայ մտավորականն այսօր ամենից շատ ինչի՞ շուրջ է մտահոգված՝ երկրի վիճակի: Այս վիճակը քաղաքական գործիչներն են ստեղծել, իրենք էլ պիտի լուծեն, բայց հայ մտավորականին ամենաշատը պետք է հուզի, հետաքրքրի մեր հիմնարար արժեքների եւ, առաջին հերթին, Հայ առաքելական եկեղեցու դեմ տարվող այս արշավին ինչ-որ ձեւով արձագանքելը: Մանավանդ որ, այսպես ձեւակերպեմ, մասնակից քաղաքական ուժերից մեկն իր նախընտրական ծրագրում գրել է՝ ուղղակիորեն վատ արշավ Հայ առաքելական եկեղեցու եւ Վեհափառ հայրապետի դեմ: Հենց այդ պատճառով, իրար հետ խորհրդակցելուց հետո որոշեցինք այդ մտահոգությունները կիսել, նաեւ լսել Վեհափառին՝ իր դիտարկումները, իր մոտեցումներին ծանոթանանք: Կարծում եմ, որ շատ օգտակար հանդիպում ստացվեց, եւ կարելի է ավելի ընդլայնված հանդիպում կազմակերպել: Ուղղակի քանի որ Վեհափառը շատ լուռ եւ այս իրականությանը չհարմարվող տեսակետ ու քաղաքականություն է որդեգրել, ապա ես կարծում եմ, որ դա իր նպաստը բերել է: Իր խոսքն էլ պիտի հնչի:

- Կարծում եք, որ իր խոսքը չի՞ հնչում բավարար կերպով:

- Այնպիսի բաների մասին պատմեց, որոնց մասին լայն հասարակությունը նույնիսկ չգիտի:

- Օրինակ՝ ինչպիսի՞:

- Դա արդեն իրեն ուղղված հարց է, գաղտնիք չէ՝ եթե ինքը նպատակահարմար չի գտնում դա բացել լայն հասարակության առջեւ, կիսվում է մտավորականների հետ: Ի դեպ, մտավորականների աջակցությունը շատ ոգեւորիչ էր իր համար նաեւ, բայց ինձ եւ մեր ընկերներից շատերի համար շատ կարեւոր էր տեսնել, թե որքան հավասարակշռված, հանգիստ եւ հաստատուն է Վեհափառ հայրապետը, եւ այն բոլոր միֆերը, տարբեր խոսակցությունները, որ իր մասին տարիներ շարունակ՝ տասնամյակներ, տարածվում էին, որեւէ աղերս չունեն այն իրականության հետ, որը կա, եւ որը մենք, ըստ էության տեսնելով, ցավոք սրտի, չենք գնահատել այսքան ժամանակ: Այն հանգամանքը, թե ինչ մեծ աշխատանք է ինքը տարել Հայ առաքելական եկեղեցու՝ եւ կառույցի, եւ զարգացման, եւ իր բոլոր սոցիալական ծրագրերը, եւ հայորդաց տները, եւ ճաշարանները, բարեգործական, հսկայական աշխատանք է տարել, ինչն ինքը համարում է, որ դա իր առաքելությունն է, իր գործն է, եւ դա պետք է աներ անկախ ամեն ինչից: Բայց այդ արվածը չգնահատելը ...էլ չասեմ այն հանգամանքը, թե Մայր Աթոռն ինչպես է դարձել մի հայկական Վատիկան. ուղղակի հպարտանում ես՝ մտնելով ներս:

- Եղե՞լ են մտավորականներ, որոնք հրաժարվել են գալ Վեհափառի հետ հանդիպման:

- Բացարձակ, ընդհակառակը՝ ինձ հետ նույնիսկ մի քանի հոգի կապվեցին, ասում էին՝ ինչո՞ւ մեզ չէիք տեղեկացրել: Շատ-շատերը կան, որ կիսում են մեր մոտեցումները, մեր անհանգստությունները, բայց քանի որ մտածեցի, ու Վեհափառի հետ քննարկել էինք մի քիչ փոքր խմբով հանդիպել, բայց այնպիսի խումբ, որը տարբեր ոլորտներ է ներգրավում: Այնտեղ այնպիսի մարդիկ էին հավաքված, որ չքաղաքականացված էին, այսինքն՝ քաղաքական նախասիրությունների խնդիր չկար: Բոլորին իր շուրջը համախմբել էր Հայ առաքելական եկեղեցու շուրջ տարվող այս քաղաքականության մտահոգությունը, եւ ես կարծում եմ, որ այդ բանակը շատ ավելի մեծ է:

- Քաղաքական հարցեր՝ մասնավորապես ընտրությունների հետ կապված, քննարկվեցի՞ն:

- Իհարկե, ստեղծված իրավիճակը քաղաքական է, հասկանում էինք, որ կա այդ արշավը, որը խիստ հակասահմանադրական է, բայց օրինական ընթացք տալ դրան՝ դա ուղղակի անթույլատրելի բան է, եւ դա էր հիմնական խթանը, որ, ի վերջո, փորձենք կիսվել մեր մտահոգություններով եւ լսել Վեհափառին:

- Ենթադրում ենք, որ նման հանդիպումները շարունակական են լինելու:

- Չգիտեմ՝ կլինի նման հանդիպում նորից, թե՝ ոչ, բայց շատերն են ցանկանում: Խնդիրն այն է, որ ուղղակի ամեն մեկն իր տեղում այդ մտահոգությունը բարձրաձայնի, կարծում եմ՝ այդպես ավելի ճիշտ կլինի, որովհետեւ, ըստ էության, այդ կազմը, որ հավաքվել էր, մենք ընդամենը ներկայացուցիչներն էինք այն մտավորականության, որ մտահոգված է այս հարցով: Բայց բանակը շատ ավելի մեծ է, վստահաբար: Այստեղ քաղաքական նախասիրության հարց չկա, մենք բոլոր այն մտավորականների հետ ենք, ովքեր կանգնած են Հայ առաքելական եկեղեցու կողքին եւ պատրաստ են պաշտպանել մեր սուրբ եկեղեցին ու Վեհափառ հայրապետին: Մեր նախասիրությունը դա է, մեր քաղաքական, եթե կուզեք՝ քաղաքական նախասիրությունը դա է:

- «Մենք» ասելով նկատի ունեք Վեհափառի հետ հանդիպման գնացած մշակույթի գործիչներին:

- Այո, այդ խմբին եւ ասում եմ՝ այդ բանակը շատ ավելի մեծ է, որովհետեւ ես նախնական մտածում էի, որ ավելի մեծ խմբով հանդիպենք, բայց հետո այդպես որոշվեց, սակայն դա նշանակություն չունի, ավելի մեծ խմբի ներկայացուցիչներն էինք:

- Դուք նշեցիք, որ մտավորականներին մեղադրում են երկրում ու երկրի շուրջ տեղի ունեցողի մասին դիրքորոշում չհայտնելու համար: Սա կարո՞ղ ենք դիտարկել որպես հայ մտավորականության դիրքորոշում՝ Եկեղեցու դեմ տարվող պայքարում:

- Այո, այո, ես համոզված եմ եւ չեմ պատկերացնում հայ մարդ, մտավորական, այն էլ՝ մտավորական, որը կանգնած չլինի մեր հոգեւոր հիմնական արժեքի շուրջը, կողքին, որովհետեւ մեր ամբողջ մշակույթը, այն մշակույթը, որով մենք հպարտանում ենք՝ սկսած եկեղեցաշինությունից, մատենագրությունից, հոգեւոր երաժշտությունից, մանրանկարչությունից, այբուբենից, ամբողջի համար պարտական ենք Եկեղեցուն եւ հոգեւորականությանը: Այն բոլոր սրբերը, ուղղակի սրբությամբ ենք այդ անունները տալիս՝ Մաշտոցից, Նարեկացուց մինչեւ Կոմիտաս, բոլորը հոգեւորականներ են: Ընդհանրապես, մեր մշակույթը, պատմական մշակույթը, վանական մշակույթը... ո՞նց կարող ենք մենք դրա կողքին չլինենք: Բա որտե՞ղ լինենք, ինչի՞ կողքին լինենք: Ընդհակառակը՝ մենք պետք է ողջունենք, սատարենք եւ ամեն գնով փորձենք ապահովել ընթացքը, շարունակությունը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

3 ՏԵՍԼԱԿԱՆԻ ՄԻՋԵՎ Է ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Քանի գնում, թեժանում է քարոզարշավը: ՔՊ-ն արդեն բացահայտ սպառնալիքներ է հնչեցնում: Քաղտեխնոլոգ **Արմեն Բադալյանին** խնդրեցինք քարոզարշավը մեկնաբանել.

«19 քաղաքական ուժ է մասնակցում, բայց բովանդակային, իմաստային տեսակետից 3 տեսլական կա՝ իրարից տարբերվող: ՔՊ կուսակցության տեսլականն է՝ լինել խաղաղ, սուսուփուս ճանապարհ բացել, Հայաստանը վերածել մի տարածքի՝ դիմանկար չունեցող: Հայաստանի տարածքով արեւելքից արեւմուտք գնան բեռնատարները՝ հասնելով Կենտրոնական Ասիա, հումք վերցնեն, նորից Հայաստանի տարածքով տանեն դեպի Եվրոպա: Այսինքն՝ զուտ վերածվենք տարածքի, որեւէ խոսք ազգայինի, ապագայի մասին չկա: Եվ մի բան էլ՝ ուտենք, խմենք, մինչեւ կմեռնենք: Երկրորդը. ի տարբերություն ռուսամետ ուժերի, ինչպես ընդունված է ասել՝ 3 ընդդիմադիր ուժերն են, որը տեսլական է առաջարկում, ըստ որի՝ Եկեղեցու նկատմամբ հալածանքները դադարում են, զարգանում է տնտեսությունը, ունենալ, իհարկե՝ ոչ 300 հազար, բայց այնուամենայնիվ՝ աշխատատեղեր: Այսինքն՝ դու լինում ես օբյեկտ, գոնե պահպանում ես ազգային ինչ-որ բան: 3 ուժերի մեջ «Հայաստան» դաշինքը նշում է, որ կարելի է Արցախի ազատագրման հետ կապված ինչ-որ ծրագրեր ունենալ, ի տարբերություն «Ուժեղ Հայաստանի», որը նշում է, որ հարեւան երկրի հանդեպ տարածքային նկրտումներ չունի: Իսկ «Հայաստան» դաշինքն ասում է, որ Արցախը պետք է ազատագրի, սա նշանակում է, որ, այսպես թե այնպես, դու նկրտում ունենում ես, իսկ դա, բնականաբար, հանգեցնում է Հայաստանի՝ սուբյեկտ դառնալու գործընթացին: Եթե տարածքային նկրտում չունես՝ մի քանի գործարան, ֆաբրիկա ես կառուցում եւ Եկեղեցուն չես հալածում, դու լավագույն դեպքում մնում ես օբյեկտ, չես դառնում, ՔՊ-ի ասած՝ հարթ ճանապարհ: Եթե դու Արցախի հարցն ես բարձրացնում եւ փորձում ես հասնել Արցախի վերաազատագրմանը, արդեն սուբյեկտի նշանակություն ես ձեռք բերում: Հայաստանը սուբյեկտ էր, երբ Արցախը կար, իհարկե՝ ունենալով դաշնակիցներ: Երրորդը ներկայացնում է Ազգային ժողովրդավարական բեւեռը, որը նույնպես դեմ լինելով ՔՊ-ի տեսլականին, իր տեսլականն է ներկայացնում, այն է՝ Հայաստանը դաշնակից է ԱՄՆ-ի հետ, պետք է փորձի ձգտել, հասնել այն մեծ Հայաստանին, որը Քուռ-Արաքսից կհասնի մինչեւ Վիլսոնի կողմից գծված սահման: Տակտիկական տեսակետից կարող եմ ասել, որ բոլոր քաղաքական ուժերը շատ աղքատիկ, թույլ... տպավորություն է, որ Հայաստանում ընտրական տեխնոլոգիաներ չեն զարգացել՝ 1995 թվականի ընտրությունն է: Ընդամենը փողոցում քայլել, թռուցիկներ բաժանել, որոնք մեծ իմաստով անորակ են արված, դա բազմաթիվ տեխնոլոգիաներից մեկն է, ո՛չ ամենակարեւորը»:

Փաշինյանը մի ձայնագրություն ցուցադրեց եւ սպառնաց, դա ի՞նչ է՝ Փաշինյանի հերթական մանիպուլյացիա՞ն: «Այդ ձայնագրությունը բանի տեղ մի դրեք, կանխամտածված սեւ փիառ են անում: Հիմա արհեստական բանականության միջոցով ցանկացած բարբառով կարող են մի այնպիսի ձայնագրություն հրապարակել, որ, օրինակ, Քենեդուն ղարաբաղցիներն են սպանել: Լարումն ինչի՞ է տեղի ունենում, ոչ միայն խաղադրույքն է մեծ, այլեւ եթե դու լարում ես քաղաքական գործընթացը, մրցակցի ընտրազանգվածի ձայները բերում ես քեզ: Գուցե դա բեմականացրած ձայնագրություն է, որը դնում է շրջանառության մեջ՝ փորձելով ցույց տալ, որ ինքն ուժեղ տղա է: Բայց ոնց որ մթնոլորտ է կտրուկ փոխվում՝ այ, դա է ստիպում իշխող ուժին գնալ սեւ փիառի, տեսնում են, որ հանրության տրամադրությունները կտրուկ փոխվում են՝ ընդդեմ իշխանության: ...Պետք է նշենք, որ, ի տարբերություն նախորդ 35 տարվա, այս ընտրությունները ոչ այնքան հայաստանյան, որքան արտաքին աշխարհաքաղաքական ուժերի պայքարն է ՀՀ տարածքում: Եթե դա Ուկրաինայում կրում է ռազմական առճակատման բնույթ, Հայաստանում կրում է քաղաքական հակամարտության բնույթ, որի ժամանակ օգտագործում են բոլոր հնարավոր տեխնոլոգիաները, այդ թվում՝ մանիպուլյացիան կամ սեւ փիառը: Սա աշխարհաքաղաքական կենտրոնների բախումն է Հայաստանում, եւ մի կողմի հաղթանակը նշանակում է մյուս կողմի ուղղակի վերացում Հայաստանից: Մի կողմը ԵՄ-ն է, Բրիտանիան, ինչ-որ չափով՝ Թուրքիան, Ադրբեջանը, ԱՄՆ-ն: Մյուս կողմը՝ Ռուսաստանը, ինչ-որ չափով՝ Իրանը: Իշխող քաղաքական ուժի վերարտադրման դեպքում Հայաստանից ռուսական ռազմաքաղաքական ներկայությունը շատ կարճ ժամանակում վերացվելու է»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՇԱՐԴ

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ, ՈՐ ԱՅԼԵՎՍ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԲԱՑԵԻԲԱՑ

Հնձ այլեւս չի հետաքրքրում, թե Փաշինյանն էլի ինչ է ուզում անել՝ նոր տարածքներ հանձնել, ադրբեջանցու անվան տակ 300 հազար սիրիացի ահաբեկիչ բերել, ԵՄ գնալ… Փաշինյանն այս սպառնալիքներն իրականացնելու համար այլեւս ժամանակ չունի: Ինքն է անձամբ խոստովանել, որ իր ապագա արկածախնդրությունները պայմանավորված են ընտրություններում տանելիք հաղթանակով: Միանգամից ասեմ՝ Փաշինյանի հաղթանակն այս ընտրություններում բացառված է: Իսկ եթե հաղթանակը բացառված է, նշանակում է՝ բացառված են նաեւ ապագայի հետ կապված նրա բոլոր այլանդակ «պլանները»: ՔՊ-ն ու Փաշինյանը ջարդուփշուր են լինելու հունիսի 7-ին: Նրանց մնաց 18 օր…

Ինչու եմ այսքան վստահ: Նախեւառաջ, ես շնորհակալ եմ Փաշինյանին, որ այլեւս չի սեթեւեթում եւ ամեն ինչի մասին, որ պատրաստվում է անել, հայտարարում է բացեիբաց: Դա տեղը տեղին գրգռում է հանրությանը, եւ անգամ նրանք, որ տասը եւ ավելի տարիներ մերժել են ընտրությունները, գալու են տեղամաս՝ «ոչ» ասելու Փաշինյանին, գալու են՝ Փաշինյանի ապագա հանցագործությունների մասնակից չդառնալու հստակ մտադրությամբ: Մյուս կողմից էլ՝ ոչ ոք այնպես չի փոշիացնում ՔՊ-ի ընտրազանգվածը, ինչպես Փաշինյանն ու բյոռնա ուսապարկերը: Հանրապետության գյուղերով ու քաղաքներով քարոզատռճիկ տվող այս բիոմասսան վաղուց արդեն ասելիք չունի հանրությանը, իսկ թատերականացված շոուները, որ իրենց հետ այլեւս գաղտնի չի մնացել՝ սկսած պայմանավորված պատերազմից ու պարտությունից, վերջացրած զոհված հերոսների անուններն ու թիվը հրապարակելու անկարողությամբ: Այս իշխանությունների տնտեսական հավկուրության, աշխարհաքաղաքական հարցերում դրսեւորած բոբիկության, մարդկանց սոցիալական խնդիրները լուծելու անկարողության, կրթության, գիտության ու մշակույթի բնագավառներում երկու էշի գարի իրարից ջոկել չկարողանալու մասին էլ չենք խոսում: Ու մեկ էլ՝ ձեր փայ Կտրիճը թաղի ձեզ, Եկեղեցու հմրցն ինչ քաղաքից քաղաք եւ գյուղից գյուղ են տանում, զավեշտ են առաջացնում ոչ միայն նորմալ մարդկանց, այլեւ 2018 եւ 2021 թվականներին այդ փոքրիկ խմբակին ձայնակցած աննորմալների շրջանում: Բա ինչ էիք ուզում, որ լիներ… Ավելի մեծ խայտառակություն կամ, քան իրեն կորցրած վարչապետը, քան կանանց սպիտակեղենի ֆոնին գովազդվող իշխանությունը, քան ցռան Պնախարարը, որ սպառնում է ժողովրդին տրորելով անցնել… Եվ դեռ չեն հասցրել լինել բոլոր բնակավայրերում: Ամեն տեղ մի չոռ, մի ցավ կպցնում են, թքում, մրում, ընդհուպ նիկոլական քարոզչաբերի գլխին ջուր լցնում, նրանց առաջ պիկետներ դնում, վանկարկում ամեն մեկն իր սրտի ուզած ընդդիմադիր թեկնածուի անունը: Մի խոսքով՝ խայտառակվել են՝ էլ դու սուս:

Ի պատիվ ընդդիմության պետք է ասել, որ լավ են բռնել Փաշինյանի ամենացավոտ տեղերից: 3-4 ճակատով այնպես են արեւին տվել Փաշինյանի կեղտոտ լվացքը, որ ոչինչ հանրությանը, եւ անգամ նրանք, որ տասը եւ ավելի տարիներ մերժել են ընտրությունները, գալու են տեղամաս՝ «ոչ» ասելու Փաշինյանին, գալու են՝ Փաշինյանի ապագա հանցագործությունների մասնակից չդառնալու հստակ մտադրությամբ: Մյուս կողմից էլ՝ ոչ ոք այնպես չի փոշիացնում ՔՊ-ի ընտրազանգվածը, ինչպես Փաշինյանն ու բյոռնա ուսապարկերը: Հանրապետության գյուղերով ու քաղաքներով քարոզատռճիկ տվող այս բիոմասսան վաղուց արդեն ասելիք չունի հանրությանը, իսկ թատերականացված շոուները, որ իրենց հետ

եղավ, վարչապետի գլխավորած եկեղեցական խորհուրդն ուր է, Կճոյանն ուր է՝ «Բենթլի»-ով փախամ, հոգեւոր հանրահավաքն ավարտվեց… Բա էլ ինչ հույսով եք ձեր գույնզգույն շորերով ու գլխարկներով, սրտիկ-մրտիկով, քրմապետի հետեւից ընկած, դեսուդեն վազում, այսքանից հետո դեռ ապուշ մարդ կամ, որ իր քվեն տա ձեզ:

Ընդդիմության հաղթանակին կարող է խանգարել մեկ բան: Տղերք, հանկարծ ձեր բռնած գործին վատություն չխառնեք՝ տակից կլինի, թե՝ գլխից: Ով թուլացավ՝ փչացնելու է ժողովրդի հաղթանակը: Որոշեք, միասին հայտարարեք, որ ոչ մի պարագայում, անգամ ընտրությունների ամենաարտառոց արդյունքների դեպքում ՔՊ-ի հետ չեք համագործակցելու: Ժողովրդի՝ ձեզ տված ամեն քվեն ոսկի է, փրկության ծովում մի կաթիլ: Գյումրի-2, մի բան էլ ավել՝ լինելու է:

Փաշինյանին ամբողջովին զինաթափելու համար խոստացեք, որ պետական ապարատի բոլոր մասնագետները, քաղծառայողներն ու ապաքաղաքական պաշտոններ զբաղեցնողները կմնան իրենց տեղերում, աշխատանքը հանիրավի կորցրած ուսուցիչները, բժիշկները, դասախոսները, դպրոցի տնօրենները կվերականգնվեն իրենց պաշտոններում: Սրանք շռայլություններ չեն, այլ՝ արդարությունը եւ հասարակության համերաշխությունը վերականգնելու իրատեսական քայլեր: Նիկոլն ուժեղ էր իր պառակտչությամբ, դուք դարձեք մեր հասարակության համախմբողները:

Առջեւում ՀԱՊԿ գագաթնաժողովն է, որին Փաշինյանը չի մասնակցելու: Դա այն նույն Փաշինյանն է, որը ժամանակին հայտարարել է, թե Հայաստանի օկուպացված տարածքների համար պատերազմ չի անելու: Դա այն նույն Փաշինյանն է, որն անամոթաբար խոսում է նոր տարածքներ հանձնելու մասին: Այս վերջինը հաստատ չի լինելու, իսկ ինչ վերաբերում է Հայաստանի օկուպացված տարածքներին, ապա դրանք, քանի դեռ չենք ունենա մեր զինված ուժերը, կարող են վերադարձվել միայն հիշատակածս կառույցի ուժերով: Եվ, ուրեմն, մենք պետք է ձեւավորենք այնպիսի իշխանություն, որի առաջին քայլերից մեկը պետք է լինի Հայաստանի դուրսբերումը ՀԱՊԿ-ի «սառեցված անդամի» կարգավիճակից:

Ինձ թվում է՝ շատ բարդ բաներից չխոսեցինք այսօր: Գործընկերներս, հարգանքս իրենց, իրավիճակի թե՛ ավելի խոր եւ թե՛ ավելի բարդ վերլուծություններ են անում: Հատկապես հետաքրքրական են ՀՀ գործող իշխանությանն Ադրբեջանի, Թուրքիայի, ԵՄ-ի օգնության

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՓԱԽՇԵԼՈՒ ՏԵՂ ԱՅԼԵՎՍ ՉԿԱ, ՊԵՏՔ Է ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՁԱՏԱԳՐԵԼ

Մի՞ացյալ Նահանգները եւ ԵՄ երկրները շարունակում են արտաքսել Հայաստանի քաղաքացիներին եւ ոչ միայն Հայաստանի, բայց մեզ հետաքրքրում են հենց նրանք: Լրատվամիջոցները տեղեկացնում են, որ այս տարի արդեն երրորդ ինքնաթիռն է Գերմանիայից հայ վտարանդիներ տեղափոխում Հայաստան: Վերջին ինքնաթիռը Երեւանում վայրէջք կատարեց օրերս: Դրանից էլ մի քանի օր առաջ՝ մայիսի սկզբներին, ԱՄՆ-ից նույն առաքելությամբ եւս մի ինքնաթիռ էր վայրէջք կատարել «Զվարթնոց» օդանավակայանում: Նույնը կատարվում էր նաեւ անցյալ տարի: Հայաստանի իշխանությունները հրաժարվում են պաշտոնական տեղեկություն տրամադրել, թե քանի ՀՀ քաղաքացի է արտաքսվել ԵՄ երկրներից եւ ԱՄՆ-ից: Այդ տեղեկությունը պետական գաղտնիք չէ, բայց իշխանական գաղտնիք է:

Նիկոլ Փաշինյանը, որը դեռեւս զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը, իր նախընտրական քարոզարշավի ժամանակ հպարտանում է, որ Հայաստանից ոչ միայն արտագաղթն է դադարել, այլեւ անցած տարվանից սկսվել է ներգաղթ: Փաշինյանը դա փորձում է ներկայացնել որպես իր իշխանության հաջողություն, իբրեւ թե Հայաստանում այնքան լավ է, որ ՀՀ քաղաքացիներն այլեւս ցանկություն չունեն գնալ ԱՄՆ, ԵՄ կամ Ռուսաստան, այլ, ընդհակառակը՝ կամավոր վերադառնում են Հայաստան: Ո՛չ արտագաղթի կանգնելը կապ ունի Փաշինյանի եւ նրա իշխանության գործունեության հետ, ո՛չ էլ, առավել եւս՝ ներգաղթը: Ինչպես ասացինք՝ ՀՀ քաղաքացիներին պարտադրաբար արտաքսում են, եւ ՀՀ իշխանություններն էլ թաքցնում են արտաքսվածների թիվը, որովհետեւ կարող է պարզվել, որ Հայաստանի բնակչությունն աճում է հենց այնքանով, որքան որ արտաքսվածների թիվն է, կամ, որ ավելի վատ է՝ դրանից էլ պակաս:

ԱՄՆ-ն եւ ԵՄ երկրները, նաեւ՝ Ռուսաստանը, նախկինում խրախուսում էին իրենց երկրներ ներգաղթը, համենայնդեպս, կոշտ միջոցներ չէին ձեռնարկում ներգաղթողների նկատմամբ: Այդ երկրներն ունեին էժան աշխատուժի կարիք, եւ ներգաղթողները, այդ թվում՝ ՀՀ-ից, բավարարում էին այդ պահանջարկը: Հիմա իրավիճակը փոխվել է. տնտեսական իրավիճակն ինչպես ԱՄՆ-ում, ԵՄ-ում, այնպես էլ Ռուսաստանում վատանում է, գները թանկանում են, արտադրությունները փակվում են, աշխատատեղերը կրճատվում են, եւ նույնիսկ քաղաքացիները շատ ժամանակ չեն կարողանում աշխատանք գտնել: Բոլոր երկրները խստացնում են իրենց միգրացիոն քաղաքականությունը՝ կանխելու ներգաղթը, քանի որ սեփական քաղաքացիների գործազրկությունն առաջացնում է սոցիալական լարվածություն, անգործ, անաշխատանք, անեկամուտ մարդը գլխացավանք է պետության համար: Սեփական քաղաքացիներին չես արտաքսի, իսկ փախստականներին շատ հեշտությամբ բռնում ես, նստեցնում ինքնաթիռ եւ ուղիղ այն երկիրը, որտեղից եկել է:

Այն մարդիկ, ովքեր մտադրություն ունեին փախչելու Հայաստանից, հասկանում են, որ իրենց չեն սպասում ո՛չ ԱՄՆ-ում, ո՛չ ԵՄ-ում, Ռուսաստանում էլ պատերազմ է՝ դրա բոլոր հետեւանքներով: ԱՄՆ-ում ապրող ծանոթ փաստաբանն ասում է, որ շատ հայեր կամավոր են վերադառնում Հայաստան, քանի որ տաքսու վարորդի եւ առաքիչի աշխատանքով այլեւս հնարավոր չէ ապրել ու տուն պահել, գները բարձրացել են, մարդկանց եկամուտները՝ նվազել: Հայաստանից արտագաղթի դադարեցումը եւ ներգաղթը կապված են ոչ թե Հայաստանում տնտեսական կամ սոցիալական պայմանների բարելավման հետ, այլ արտագաղթի հիմնական երկրներում տնտեսական եւ սոցիալական պայմանների վատացման: Փախչելու տեղ այլեւս չկա, եթե անգամ փախչես էլ, միեւնույն է՝ շատ կարճ ժամանակ հետո կարող են բռնել եւ արտաքսել: 25-30 հազար դոլարով ԱՄՆ, 5-6 հազար եվրոյով ԵՄ գնալը դարձել է ռիսկային ներդրում, կարող ես նույնիսկ ներդրած գումարդ հետ չբերել:

35 տարի շարունակ Հայաստանը դժգոհություն է արտահանել, դժգոհները միշտ դուրս են եկել

երկրից: Ամեն անգամ, երբ իշխանությունից եւ նրա վարած քաղաքականությունից դժգոհ քաղաքացիները փորձել են ընտրություններով կամ պայքարի այլ միջոցներով երկրում իշխանություն կամ իրավիճակ փոխել ու չեն կարողացել, դրան հետեւել է արտագաղթի հսկայական ալիք: Մարդիկ, տեսնելով, որ չեն կարողանում Հայաստանը փոխել, փոխել են իրենց բնակության վայրը: Հիմա այլեւս այդ հնարավորությունը չկա, դժգոհությունը հնարավոր չէ արտահանել, դժգոհները չեն կարող այլեւս արտագաղթել: Հայաստանը բարեփոխելն այլընտրանք չունի: Մենք մեր երկրից փախչելու տեղ այլեւս չունենք, մեզ ոչ մի տեղ չեն սպասում, ընդհակառակը՝ մերժում են, միակ ելքը սեփական երկիրը բարեփոխելն է, այն մեր ձգտումներին եւ երազանքներին համապատասխանեցնելը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Հայաստանում 2025թ. միջին ամսական աշխատավարձը կազմել է 303 հազար 140 դրամ, իսկ 2026թ. մարտին այդ ցուցանիշը հասել է 329 հազար 66 դրամի:

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԽ պատգամավոր (1990-95թթ.)
ՀՀ ԱԺ պատգամավոր (1995-99թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

Առաջին հայացքից կարող է թվալ, թե աշխատողների բարեկեցությունն էապես բարելավվել է: Սակայն հանրային տրամադրությունները վկայում են, որ աշխատունակ բնակչության զգալի մասի համար պաշտոնական թվերը չեն արտացոլում նրանց իրական կենսամակարդակը:

Սա չի նշանակում, թե պաշտոնական վիճակագրությունը «նկարված» է: Խնդիրն ավելի խորքային է. մենք գործ ունենք «միջին ցուցանիշի թակարդի» հետ, երբ ճիշտ ցուցանիշն աղավաղում է մեծամասնության իրական եկամտի մասին վիճակը: Միջին աշխատավարձը վատ է նկարագրում տիպիկ աշխատողի բարեկեցությունը. այն կարող է աճել նույնիսկ այն դեպքում, երբ մարդկանց մեծ մասը շարունակում է ստանալ հայտարարված միջինից զգալիորեն պակաս եկամուտ:

ՄԻՋԻՆ ԵՎ ՄԵԴԻԱՆ (ՄԻՋԻՆԱԳԻԾ) ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Միջին աշխատավարձի հաշվարկը շատ պարզ է. աշխատավարձի ընդհանուր ֆոնդը բաժանվում է աշխատողների թվի վրա: Բայց եթե աշխատողների մի փոքր խումբ ունի շատ բարձր եկամուտներ, դրանք էապես բարձրացնում են միջին ցուցանիշը, նույնիսկ եթե մեծամասնությունը ստանում է շատ ավելի քիչ:

Այդ պատճառով կարեւոր է դիտարկել նաեւ մեդիան աշխատավարձը, որը հաշվարկելու նպատակով աշխատողներին բաժանում են երկու հավասար խմբի. մի կեսը բաղկացած է նրանցից, ովքեր ստանում են մեդիան աշխատավարձից քիչ, մյուս կեսը՝ ավել: Այս ցուցանիշն ավելի հստակ է արտացոլում աշխատողի եկամտային վիճակը:

Փորձագիտական գնահատականների համաձայն՝ 2026թ. հունվարին Հայաստանում միջին աշխատավարձը կազմել է 293 հազար 309 դրամ, իսկ մեդիան աշխատավարձը՝ 219 հազար 736 դրամ: Սա նշանակում է, որ պաշտոնապես զբաղված աշխատողների կեսը ստացել է վերջին թվից պակաս, իսկ մյուս կեսը՝ ավելի շատ:

Կա նաեւ մեկ այլ կարեւոր ցուցանիշ՝ մոդալ արժեք, այսինքն՝ ամենահաճախ հանդիպող աշխատավարձը: Հայաստանում այն գնահատվում է մոտ 123 հազար 326 դրամ: Սա շատ ավելի մոտ է մարդկանց առօրյա փորձին, քան պաշտոնական միջին աշխատավարձը:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԽՄԲԵՐԻ

Աշխատավարձի բաշխումը ցույց է տալիս այն, ինչ միջին ցուցանիշը հաճախ թաքցնում է: Modex-ի տվյալներով, որոնք հիմնված են ՊԵԿ-ի տվյալների վրա, 2025թ. մայիսին Հայաստանում վարձու աշխատողների մոտ 57%-ը ստացել է մինչեւ 199 հազար դրամ համախառն ամսական աշխատավարձ: Միաժամանակ, ամսական 5 միլիոն դրամ եւ դրանից բարձր աշխատավարձ ստացողների թիվը եղել է 1077 մարդ կամ աշխատողների 0.1%-ը:

Համախառն ամսական աշխատավարձ	Աշխատողների թիվ	Աշխատողների բաժինը
0-199 հազար դրամ	450,051	56.9%
200-499 հազար դրամ	235,604	29.8%
500-699 հազար դրամ	42,473	5.4%
700-999 հազար դրամ	25,013	3.2%
1.0-1.9 մլն դրամ	25,864	3.3%
2.0-4.9 մլն դրամ	10,238	1.3%
5 մլն դրամ եւ ավելի	1,077	0.1%

Աղյուսակում ներկայացված թվերը բացատրում են, թե ինչու հասարակությունը թերահավատորեն է ընկալում 300 հազար դրամ միջին աշխատավարձին վերաբերող տվյալները:

Քանի որ աշխատողների կեսից ավելին ստանում է մինչեւ 199 հազար դրամ, 300 հազար դրամ միջին աշխատավարձի ցուցանիշը մեծամասնության իրական եկամուտների մասին ճշգրիտ պատկեր չի տալիս: Իսկ 5 մլն եւ ավել ստացող 1077 անձանց գերբարձր եկամուտներն արհեստականորեն ուռճացնում են միջին ցուցանիշը եւ քողարկում աշխատաշուկայում առկա վարձատրության մեծ անհավասարությունը:

ԿԵՅՑԻ ԻՆԴԵՔՍԸ

Նվազագույն աշխատավարձի դերը գնահատելու համար լայնորեն օգտագործվում է Կեյցի ինդեքսը (Kaitz index), որը ցույց է տալիս նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը միջին կամ մեդիան աշխատավարձի նկատմամբ:

Հայաստանում նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 75 հազար դրամ: Սա մոտավորապես միջին աշխատավարձի մեկ քառորդն է եւ մեդիան աշխատավարձի մոտ մեկ երրորդը: Սոցիալական քաղաքականության տեսանկյունից սա կարեւոր ազդակ է. նվազագույն աշխատավարձը չափազանց ցածր է եւ չի կարող կատարել ցածր վարձատրվող աշխատողներին պաշտպանելու գործառույթը:

Միջազգային չափանիշներով ցածր վարձատրվող աշխատողներ են համարվում նրանք, ովքեր ստանում են մեդիան աշխատավարձի երկու երրորդից պակաս: Քանի որ Հայաստանում մեդիան աշխատավարձը մոտ 220 հազար դրամ է, ապա ցածր վարձատրության շեմը կազմում է մոտ 145 հազար դրամ: Ըստ գնահատականների՝ այդ շեմից ցածր հայտնվում է աշխատողների մոտ 45%-ը: Սա արդեն ոչ թե լուսանցքային խումբ է, այլ՝ աշխատաշուկայի մեծ հատված:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ

Մեկ այլ կարեւոր սոցիալական ցուցանիշ է կենսաթոշակի փոխարինման գործակիցը, որը ցույց է տալիս միջին կենսաթոշակի հարաբերակցությունը միջին աշխատավարձին: Այլ կերպ ասած՝ այն ցույց է տալիս, թե կենսաթոշակային համակարգը որքանով է պաշտպանում մարդուն աշխատանքի շուկայից դուրս գալուց հետո:

Հայաստանում այս ցուցանիշը մնում է շատ ցածր. միջին կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի ընդամենը մոտ 20%-ը: Սա նշանակում է, որ կենսաթոշակի անցնելուց հետո քաղաքացու եկամուտն ապրում է կտրուկ անկում, եւ տարեցները հայտնվում են հասարակության ամենախոցելի խմբերից մեկում: Հետեւաբար, միջին աշխատավարձի աճն ինքնին չի նշանակում, որ տարեց մարդկանց բարեկեցությունը բարելավվում է:

ՈՐՈՇ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին. թեեւ պաշտոնական միջին աշխատավարձը «չի նկարվում», այն չի արտացոլում աշխատողների մեծ մասի բարեկեցությունը: Միջին ցուցանիշն աճում է հիմնականում բարձրաստիճան պետական ղեկավարների, ֆինանսական, առողջապահական եւ SS բնագավառների որոշ աշխատողների աշխատավարձի հաշվին: Արդյունքում՝ միջին աշխատավարձի աճը հասարակության զգալի մասը չի ընկալում որպես իրենց տնտեսական վիճակի իրական բարելավման դրսեւորում: Երկրորդ. պաշտոնապես գրանցված աշխատողների մեծ մասը գտնվում է ցածր վարձատրության գոտում: Ցածր աշխատավարձի շեմ համարելով մեդիան աշխատավարձի երկու երրորդը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում այդ գոտում գտնվում է աշխատողների մոտ 45%-ը: Երրորդ. նվազագույն աշխատավարձը Հայաստանում շարունակում է մնալ սոցիալական պաշտպանության թույլ գործիք: Կեյցի ինդեքսը ցույց է տալիս, որ այն չափազանց պակաս է թե՛ միջին, թե՛ մեդիան աշխատավարձից: Չորրորդ. միջին աշխատավարձի աճը չի վկայում ներառական տնտեսական աճի մասին: Կարեւոր է հասկանալ՝ աճում են արդյոք ցածր եւ միջին եկամուտ ունեցող խմբերի եկամուտները, նվազում է ցածր վարձատրվող աշխատողների բաժինը, եւ արդյո՞ք նվազագույն աշխատավարձը մոտենում է մեդիան աշխատավարձին: Հինգերորդ. ցածր եկամուտների խնդիրը չի սահմանափակվում աշխատաշուկայում. այն ավելի սուր է կենսաթոշակային ապահովման համակարգում: Քանի որ միջին կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի մոտ 20%-ը եւ նվազագույն աշխատավարձի մոտ 80%-ը, ապա այն չի կարող ապահովել տարեցների արժանապատիվ կենսամակարդակը: Այսպիսով, խնդիրը ոչ թե միջին աշխատավարձի սխալ հաշվարկն է, այլ այն, որ այդ ցուցանիշը քողարկում է եկամուտների սուր անհամասեռությունը: Հայաստանի պաշտոնական վիճակագրությունը պետք է պարբերաբար ներկայացնի նաեւ մեդիան եւ մոդալ աշխատավարձը, ցածր վարձատրության գոտում գտնվող աշխատողների քանակը եւ կենսաթոշակի փոխարինման գործակիցը, ինչը թույլ կտա օբյեկտիվորեն ներկայացնել եւ գնահատել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Գտնվում է ցածր վարձատրության գոտում: Ցածր աշխատավարձի շեմ համարելով մեդիան աշխատավարձի երկու երրորդը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում այդ գոտում գտնվում է աշխատողների մոտ 45%-ը: Երրորդ. նվազագույն աշխատավարձը Հայաստանում շարունակում է մնալ սոցիալական պաշտպանության թույլ գործիք: Կեյցի ինդեքսը ցույց է տալիս, որ այն չափազանց պակաս է թե՛ միջին, թե՛ մեդիան աշխատավարձից: Չորրորդ. միջին աշխատավարձի աճը չի վկայում ներառական տնտեսական աճի մասին: Կարեւոր է հասկանալ՝ աճում են արդյոք ցածր եւ միջին եկամուտ ունեցող խմբերի եկամուտները, նվազում է ցածր վարձատրվող աշխատողների բաժինը, եւ արդյո՞ք նվազագույն աշխատավարձը մոտենում է մեդիան աշխատավարձին: Հինգերորդ. ցածր եկամուտների խնդիրը չի սահմանափակվում աշխատաշուկայում. այն ավելի սուր է կենսաթոշակային ապահովման համակարգում: Քանի որ միջին կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի մոտ 20%-ը եւ նվազագույն աշխատավարձի մոտ 80%-ը, ապա այն չի կարող ապահովել տարեցների արժանապատիվ կենսամակարդակը: Այսպիսով, խնդիրը ոչ թե միջին աշխատավարձի սխալ հաշվարկն է, այլ՝ այն, որ այդ ցուցանիշը քողարկում է եկամուտների սուր անհամասեռությունը: Հայաստանի պաշտոնական վիճակագրությունը պետք է պարբերաբար ներկայացնի նաեւ մեդիան եւ մոդալ աշխատավարձը, ցածր վարձատրության գոտում գտնվող աշխատողների քանակը եւ կենսաթոշակի փոխարինման գործակիցը, ինչը թույլ կտա օբյեկտիվորեն ներկայացնել եւ գնահատել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

ՆՈԱ-Ն ԲՈՅԿՈՏՈՒՄ Է ԱՐՄԵՆ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆԻՆ



Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Մայիսի 18-ին Վաղարշապատում տեղի է ունեցել «Նոա» ֆուտբոլային ակումբի նոր մարզաբազայի բացման հանդիսավոր արարողությունը: Տեղեկացանք, որ թեեւ մասշտաբային միջոցառում է տեղի ունեցել, ու բազմաթիվ հյուրեր են ներկա եղել, միջոցառմանը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից որեւէ ներկայացուցիչ ներկա չի եղել: Մեզ հետ զրույցում ՀՖՖ մամուլի խոսնակ Սուրեն Սուքիասյանը հայտնեց, որ ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը երկրում չէ. «Մելիքբեկյանն այս պահին գտնվում է Ստամբուլում, որտեղ ՈՒԵՖԱ-ի ժողով կա, որին պետք է մասնակցի ու նաեւ Եվրոպայի լիգայի եզրափակչին պետք է մասնակցի: Բայց տեղյակ չեմ՝ հրավեր ստացվ՞ել է, թե՝ ոչ, միայն գիտեմ, որ 2 օր է՝ երկրում չէ»:

«Նոա» ֆուտբոլային ակումբի զարգացման տնօրեն Աննա Օհանյանն էլ մեզ հետ զրույցում նշեց. «Միջոցառմանը հրավիրված էին ֆուտբոլիստ Լուիշ Ֆիգոն, Կառավարությունը, Վաղարշապատի համայնքը, ֆուտբոլային համայնքի ներկայացուցիչներ, մարզիչներ, սպորտային մեդիան, միջազգային գործընկերներ: ՀՖՖ-ն հրավիրվածների ցանկում չկար»: Օհանյանը չպատասխանեց մեր հարցին, թե ինչու ՀՖՖ-ն այս միջոցառմանը մասնակցելու հրավեր չի ստացել:

Նշենք, որ վերջին շրջանում ակտիվացել են խոսակցություններն ու քննարկումներն այն մասին, որ այս իշխանությունը որոշել է ազատվել ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանից, որը, խնդիրներ ստեղծելուց բացի, ոչինչ չի տվել ՔՊ-ին, եթե, իհարկե, ֆինանսական մուտքերը չհաշվենք: Հիշեցնենք նաեւ, որ զուտ ֆորմալ պետական իշխանությունները ՀՖՖ նախագահի փոխելու լծակ չունեն: Համաձայն ֆուտբոլային կառույցների կանոնադրության՝ ֆեդերացիայի նախագահին կարող են հեռացնել միայն այն անձինք, ովքեր քվեարկել են նրա օգտին, այսինքն՝ գործադիր կոմիտեն, ակումբները: Այնուամենայնիվ, գաղտնիք չէ, որ Նիկոլ Փաշինյանի եւ Աննա Հակոբյանի որոշմամբ է արդեն 6 տարի Արմեն Մելիքբեկյանը ղեկավարում ՀՖՖ-ն:

ԱՅՍ ՇՐՋԻԿ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ՝ «ՑԻՐԿ ՈՒՌՈԴՈՎ», ԵԿԵԼ Է ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՈՎ

*Հարցազրույց ռեժիսոր, բեմադրիչ, «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար **Արթուր Սահակյանի** հետ*



- Զրույցը սկսենք «Գոյ» թատրոնի ճակատագրից. վերջակետ, թե՞ նոր տող է դեռ գրվելու:

- Արցախի վաճառքից հետո «Գոյ»-ի մասին խոսելը շատ մանր է թվում ինձ, մենք շատ ավելի էական բաներ՝ երկիր ենք կորցնում: Թատրոնն իմաստ ունի այն երկրում, որը հայի երկիրն է, որովհետեւ «Գոյ»-ը հայի թատրոն էր: Իսկ թատրոնի դատը դեռ չի սկսվել, եղել է մի միջանկյալ դատ՝ որ եթե գործը վարչական դատարանում է, որեւէ գործողություն՝ այդ թատրոնի ունեցվածքի, կարգավիճակի նկատմամբ, արգելվում է: Բայց Սունդուկյանի տնօրենը՝Վարդան Մկրտչյանը, թատրոնը քանդել է տվել: Դերասանը թատրոնի բեմը քանդել է, սա երեւի պատմական դեպք է, որ պետք է գրվի թատերական հանրագիտարանում, եւ պատրաստվում է այնտեղ նորոգում անել: Շենքն ունի 3 դահլիճ եւ չունի թատրոն, օգտագործվում է որպես հյուրատուն, որ օրավարձով են տալիս, իսկ թատրոնի տրամաբանությունը կորել է: Շատ լավ է, որ շենքն աշխատում է, բայց երբ աշխատում է որպես հյուրատուն՝ թատրոնի փոխարեն, արդեն խնդիր է: Իսկ այդ միջանկյալ դատի ժամանակ ես եւ Սամսոն Ստեփանյանը՝ որպես հիմադիրներ, ասում էինք, որ այնտեղ անթույլատրելի բաներ են անում, բայց դատավոր Սադոյան Լիլիթը շատ համակրելի դեմքով իր վճիռն էր կարդում, որ մենք չենք կարող համարվել շահագրգիռ անձ: Եվ թատրոնն արդեն երրորդ տարին է՝ չի գործում, 35 հոգի մնացել են գործազուրկ: Պետական աշխատավարձ էին ստանում, 14 անուն ներկայացում էինք խաղում, այդ թվում՝ «Գարեգին Նժդեհ»: Բայց այդպիսի բեմականացումներին դահլիճ չեն տրամադրում, ով էլ տրամադրի՝ գործից կհեռացվի: Իսկ մայիսից հրաման կա, որ կասկածելի բովանդակությամբ ներկայացումներին՝ հայրենասիրություն, հայասիրություն, դահլիճ չտրամադրել: Ընկալվում է հականիկոլություն:

- Ինչպես հասկացանք, թատրոնի դեմ արշավը «Գարեգին Նժդեհ» ներկայացման հետեւանքով էր՝ այն անձի, որը պահպանել է Սյունիքը: Իսկ վերջին տարիներին Սյունիքը 12 տոկոսով դատարկվել է, սեպտեմբերի 1-ին 42 դպրոց է փակվելու, Թրիփն էլ ԱՄՆ-ին վարձակալությամբ տրված ուղի է, որ մեր պետական սահմանն է Իրանի հետ:

- Մինչ այդ էլ Գորիս-Կապան ճանապարհը տվեցինք: Ես անընդհատ համոզվում եմ, որ այս շրջիկ թատերախումբը, ներողություն «թատրոն» բառիս համար, քանի որ դրանք, ավելի շուտ, «ցիրկ ուռոդով» հասկացության մեջ են տեղավորվում: Եվ այս «ուռոդների» խումբը եկել է հատուկ առաջադրանքով: Ես զարմանում եմ, երբ ինչ-որ մեկը չի տեսնում, որ Սյունիքը կորցնում ենք: Մի կողմից, Արենիով կտրում են Հայաստանը, իսկ մյուս կողմից Սեւանա լիճ են մտնում, եւ վերջ:

- Եթե համեմատելու լինենք, վերջին 8 տարիներին մեր մշակույթն ինչպե՞ս դրսեւորվեց: Նախկին խախուտ սանդղակից նիշն ավելի՞ է իջել, թե՞ ինչ-որ չափով բարձրացել է:

- ՀՀՇ-ից սկսած (Հենրիկ Հովհաննիսյանից հետո, որն այդ ժամանակ իրեն շատ լավ պահեց եւ ասում էր, որ պետք է Կոմիտաս լսենք, դասականներին լսենք), ով եկավ, ասաց՝ ինչքան վատ՝ այնքան լավ, ինչքան փուչ ու անիմաստ՝ այնքան լավ: Ասում էին, որ վերեւից իջած հրահանգ է: Հիմա կարող եք ասել, որ նոր թատրոններ բացվեցին, նախագծեր են արվում՝ ինչի՞ց եք դժգոհ: Ներկայացման միջից հանված է հանունը, այն, ինչի համար որ արվում է: Պարզապես ներկայացում է, նայում ես, ծիծաղում ու դուրս գալիս: «Խաթաբալադան», «Մեա Կուլպան» եւ «Ժանգոտ բանալին» վերլուծություն էին եւ մեր ապագայի մասին էին: Գուցե հիմա էլ ինչ-որ բաներ կան: Արցախից մի Ռուզան կա, որ, հավանաբար, անում է: Էլի կլինեն, բայց այդ ներկայացումները չեն այսօր առաջ մղվողը, այսօրվա մոտեցումը: Այսօր «Չկա տղամարդ, չկա պրոբլեմ», «Չկա կին, չկա պրոբլեմ» կամ «Տիկին նախարար»... այդպիսի բաներ են, հիմար կոմեդիաներ, որոնց ասում են՝ օճառի պղպջակներ: Նայում եմ առաջարկը եւ տեսնում, որ սա է՝ ներկայացումը զրկված լինի իր առանցքայնությունից: Այսօր, որ պետք է խոսվեր Մաշտոցից, Նժդեհից, հայկականությունից, դրանք ստեղծվում է, որ ամեն բան իր տեղում է: Եթե արվեստագետը, ցանկացած երկրում, ընդդիմադիր է, հաշտ է ամեն ինչի հետ, այդ երկրում արվեստ չի կարող ստեղծվել: Դու պետք է աստվածային հարմոնիային ձգտես, իսկ լալկան, վախեցող զրոներից զրո է ստացվում: Ո՞ւմ է պետք քո խաղացածը. դու անհատականություն չես, ուղղակի մարդկային զանգված ես: Մեր միջից հոգին են հանում, այն, ինչը երկնքից է մեր մեջ: Եթե դա վաճառում ես, դառնում ես մեֆիստոֆելյան կերակուր: Եվ պատահական չէ, որ դավաճանների ժամանակն է, տեսեք՝ մի թատրոնում աշակերտը դավաճանում է իրեն կայացրածին, մեկ ուրիշը՝ իրեն բերողին: Ամբողջ կեղտը դուրս է գալիս ջրի երես, ուղղակի այս կեղտը պետք է հավաքել ու վառել: Մի բան էլ կուզենայի ասել, որ 30 տարի է՝ մեր երկիրը չի տեսել պատիժ, ոչ ոք չի պատժվել արածի համար, այ, դրա հետեւանքն է այս ամենը: Ով եկավ՝ ավերեց, հետո հրաժարական տվեց եւ գնաց: Հետեւանք չկա, ուրեմն կարելի է ավելի վատն անել: Եթե մարդը պաշտոնի է նշանակվում, պետք է ասի, թե ինչ է անելու 1 ամսից, 2 ամսից: Այնպես չլինի, որ ասի՝ Արցախը Հայաստան է, եւ վերջ, հետո ասի՝ Ղարաբաղը Ադրբեջան է: Դրա համար պետք է տեղնուտեղը պատիժ լինի: Նույնը՝ կոռուպցիայի դեպքում եւ ամեն ինչի դեպքում, պետք է հետեւողական լինենք ու պատժենք:

- Թուրք վերլուծաբաններն անթաքույց ասում են, որ Նիկոլին պաշտպանում են Ադրբեջանը, Թուրքիան, Արեւմուտքը եւ ասում՝ ալլահը պաշտպանի Փաշինյանին:

- Նրանց հույսն այն է, որ մենք այնքան ախմախ ենք, որ իրենց ասածը կընդունենք որպես ճշմարտություն եւ կասենք՝ մեր բարեկամն են, տեսեք՝ թուրքը փոխվել է: Բացատրելու բան չկա, շատ ստույգ բացատրում էին Անդրանիկը եւ Նժդեհը, եթե լինում էր դավաճան, արդեն հասկանալի է, թե ինչ էր դրա հետ պատահում, եւ դա լինում էր դաս: Բայց հիմա երեւի մենք այդ ազգն ենք դարձել: Ես տեսել եմ երկու ազգ, մեկն 88-ի ազգն էր, մեկն էլ սա է: Բան չունեմ ասելու, կարող ես մեկ անգամ խաբվել, երկրորդ անգամ խաբվել, բայց շարունակ, անվերջ՝ ես չունեմ դրա բացատրությունը: Նախ էլեմենտար ճաշակի բացակայություն է, քեզ ամեն տեղ ներկայացնում է այս դեմքը, դու ամենուր ներկայանում ես այս դեմքերով: Ես մի օր պետք է նստեմ ու շարադրեմ, թե դեռ ինչեր են անելու, ինչեր են բերելու: Ոչ մի բանից չզարմանանք, թույլ ենք տվել, եթե հանկարծ նորից թույլ տանք...

- Ի՞նչ եք սպասում հունիսի 7-ի ընտրություններից:

- Ես հիմա, ցավոք սրտի, չեմ տեսնում, որ ընդդիմությունը կռվում է դավաճանության դեմ: Գուցե դա բարձրաձայն չի՞ ասվում: Երբեմն հակառակն եմ տեսնում: Օրեր առաջ մեկն ասում էր՝ գուցե Արարատ Միրզոյանը հիանալի պատմաբան է: Ոչ, Արարատ Միրզոյանն այս թիմից է, նա չի կարող հիանալի որեւէ բան լինել: Այս թիմի հետ լինողը չի կարող լավ բանի հետ առնչություն ունենալ՝ այդքանը տեսնելուց, այդքանի վկան լինելուց հետո: Նախ, չի բացահայտվում ոչինչ, իսկ ես համոզված եմ, որ ասելու շատ բան ունեն, որովհետեւ շատ բան գիտեն եւ գիտեն իրենք իրենց գաղտնիքները: Եթե մեկն ասաց, մյուսն էլ է ասելու, ես այդ վաբանկն եմ ուզում: Ո՞ւր է այն պատիժը, որ պետք է խոստանան, ո՞նց է լինելու չարի վերջը: Այդ հանգուցալուծումն է պետք եւ կանոնը՝ այսուհետ ապրելու:

- Ով էլ ասում է՝ պատժել է պետք, ասում են՝ այ, սրանք ռեւանշիստ են, պատերազմ են ուզում: Հասարակության մի զգալի մասն էլ է, չէ՞, այդպես մտածում:

- Իսկ Արցախն ի՞նչ պիտի լինի, չպիտի՞ վերադառնա, պիտի մնա այսպես, ոնց որ կա՞: Բնական է, պատերազմ չեմ ուզում, պատերազմից հիմար բան չկա: Բայց այդպես կարող են ինձ շատ բաներով վախեցնել, թե հաց մի առ՝ պատերազմ կլինի, ջուր մի խմիր՝ պատերազմ կլինի: Մառազմը կարող է այդտեղ հասնել, որովհետեւ սա մառազմի գերաճած վիճակն է: Եվ հետո, ինչից վախեցար՝ գլխիդ կգա, իսկ եթե չվախեցար, արդեն դիմացինդ կմտածի՝ ինչո՞ւ չի վախենում: Մի օր պիտի այս մղձավանջը վերջանա, հուսով եմ՝ հունիսի 7-ին: Բայց նահանջող կողմը, որը վերջանալու է, գիտակցելով, քանի որ նրանք թեպետ զրո են, բայց անգիտակից չեն, թե ինչին են մասնակցել, հաջորդ օրը նրանց համար լույսը դժվար է բացվելու: Դրա համար էլ կատաղի կռիվ է լինելու: Իսկ ի՞նչ էր Եվրոպայի այս գալ-գնալը, այս «եվրադվիժենիները»: Մենք իրեն պարտք չենք, մենք իրեն պարտք ենք որպես 2 օրվա զինվոր՝ մեր ամբողջ ազգաբնակչությունը: Վրաստանին էլ, չէ՞, մի երկու օր էին տվել, թե երկու օր կդիմանաք Ռուսաստանին: Ու դրանից հետո թուրքը գալու է այստեղ՝ պնդուկ ցանի, կամ մի բելգիացի՝ խոզ բազմացնի: Դա պետք է գիտակցել եւ դառնալ հայ ազգ: Ես չեմ էլ ուզում մտածել ամսի 8-ի մասին, իմ օրացույցը, ինչպես մայաների մոտ էր նշված, հունիսի 7-ին վերջանում է: Ես հիմա չեմ ուզում մտածել վատի մասին, վատն ինձ համար այն է, որ այս վիճակը շարունակվի, այս քայլիստները շարունակվեն: Սրանք հենց այնպես չեն գնալու, սրանք պիտի պատասխան տան այս ամեն ինչի համար: Բայց հանկարծ այնպես չլինի, որ սրանք իշխանությունը տան իրենց ստեղծած ընդդիմությանը: Երկիրն արմատական հայանա: Հիմա ո՞վ է այդ հայը, ո՞վ է հաղթողը, ես դեռ մտածում եմ: Ախր, ի՞նչ կարիք կա՝ նորից ու նորից համոզվել, մենք եզրակացություն չենք անում, մեր սխալներից դաս չենք առնում ու հաջորդ անգամ նույն սխալը կրկնում ենք: Դրա համար էլ մեր դեմ կռվելու ձեւը գիտեն, մեր միջից են դավաճան գտնում, միշտ եղել է այդպես: Բերդը ներսից է քանդվում: Չգիտեմ, առաջ Աստված: Մեր Տիրոջը արժանի լինենք, արժանի լինենք, որ նա լինի մեզ Տեր: Այդուհանդերձ, այս կյանքն անցնելու է, ով ինչքան ուզում է դիզած լինի, դուռը բացվելու է, մտնելու է մի տեղ, այնտեղ պատասխան տալու տեղն է: Եթե նույնիսկ այստեղ պատասխան չտվեցին, տալու են այնտեղ, ես վստահ եմ:

Հուսիկ Արա

ԵՎ ԱՐԴՅՈՔ Ո՞Վ Է ԵՐԱԶԵԼ ԱՅԴՔԱՆ ԴԱԺԱՆ... ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարական բաստիոնի վարչապետը կոկորդով մեկ բղավում է, թե սատկացնելու է, կզզացնելու է ու էլի չգիտեմ ինչ բռնություն է գործադրելու իր քաղաքական ընդդիմախոսների, մրցակիցների նկատմամբ: Եվ դա՝ եվրոպական

համայնքի հավաքից ու եվրոպացի առաջնորդների հետ նույնանալու փորձերի էպոպեայից շատ չանցած: Հայտնի՞ է արդյոք մսյո Մակրոնին, որ իր ընկերը, համախոհն ու բարեկամը՝ մսյո Նիկոլը, մարդկանց, իր բոլոր մրցակիցներին սատկացնելու սպառնալիքներ է հնչեցնում՝ բարձրախոսով, երկրի մայրաքաղաքի կենտրոնում, ի լուր, ի տես աշխարհի, ու ոչ մի արձագանք այդ այլանդակությունը չի ունենում: Կարո՞ղ էր արդյոք մսյո Մակրոնն ինքը կանգնել Փարիզի կենտրոնում եւ բղավել, որ սատկացնելու է, ասենք՝ Մարին Լը Պենին: Խիստ կասկածելի է, թե կարող է, բայց նաեւ կասկածելի է, որ նրան չեն հասնում այս բացառիկ «ժողովրդավարական» դրսեւորումների մասին լուրերը: Ենթադրելի է, որ ոչ միայն մենք, այլեւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, մի տեղ՝ առավոտյան, մի տեղ՝ գիշերով, մի տեղ՝ գինիով, մի տեղ՝ պոպկորնով, նստում դիտում են, թե ինչ է կատարվում Հայաստանում: Նման արկած նրանք չեն տեսել:

Արեւմտյան ժողովրդավարության մեր ուսուցիչներն ինչո՞ւ են լռում: Մեր բարեկամ, կայացած երկրների դեսպանատներում, միջազգային կառույցներում ունեն ինտերնետ, կապի այլ միջոցներ, տեղյա՞կ են, որ Հայաստանում ժողովրդավար են կարգել մի մարդու, որն անզուսպ սպառնում է վերացնել, չոքացնել, կզզացնել ու սատկացնել իր ընդդիմախոսներին: Գիտե՞ն, որ իրենց աշակերտը չի հանձնում ժողովրդավարության քննությունը: Գո՞հ են արդյոք իրենք, երբ քարոզարշավի ընթացքում վարչապետին ուղղված քաղաքական քննադատություն հղող եւ որեւէ անհարմար հարց տվողներին կամ ձերբակալում են, կամ աշխատանքից հեռացնում, կամ զորացրում, կամ տանում հոգեբուժարան ու, բառի բուն իմաստով՝ վերացնում: Ժողովրդավարը զրպարտում է, հայհոյում ու մեղադրում ընդդիմախոսներին չապացուցված մեղքերում, ավելին՝ արհամարհում է անմեղության կանխավարկածն ու ծաղրում դատական վճիռները: Սա՞ էր, ուրեմն, ժողովրդավարությունը:

Ուզում եմ պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե այսպես իրեն դրսեւորեր ժամանակին Սերժ Սարգսյանը կամ Ռոբերտ Քոչարյանը: Եթե նրանք վերցնեին բարձրախոսն ու գոռային, թե կզզացնելու ու սատկացնելու են ընդդիմադիր Նիկոլին, ի՜նչ բարձր ոռնոց կբարձրանար դրանից հետո... Պետք է պատկերացնել, թե ինչպես իրար կխառնվեին հասարակական սեկտոր կոչված բծախնդիր ու անվերապահ ՀԿ-ականները: Իսկ ինչպե՞ս կարձագանքեին դեսպանատները, ինչպե՞ս այս բոլոր խմբերի կողմից կպախարակվեին իրենց իշխանության օրոք ուժի սպառնալիքով մրցակիցների հետ խոսող պաշտոնյաները:

Զգում ենք, որ արդեն ոչ թե ափսոսանքով, այլ ավելին՝ կամաց-կամաց երազանքով ենք խոսում այն տարիների ղեկավարների մասին, որոնց անվանում էինք բռնապետեր ու մերժեցինք՝ հանուն ժողովրդավարության: Նիկոլ Փաշինյանի հիստերիկ սպառնալիքների ներքո ուրիշ բան էր լսվում, հիշվում՝ նախկինների օրոք անցկացված քարոզարշավների հանգիստ ու մրցակցային մթնոլորտը... Հիշում ու զարմանում ենք, որ մինչեւ մարտի 1-ը, երբ Նիկոլն էլի գոռում էր, քարոզարշավները նման չեն եղել կյանքի ու մահվան պայքարի, չեն առաջացրել քաղաքացիական բախումների վտանգ, չեն վախեցրել ու չեն զզվեցրել: Ահա թե ինչպիսին են դրանք եղել ժամանակին: Մի՞թե սա ենք մենք երազել, ու, այսպիսով, կատարվե՞լ է մեր երազանքը:

Պարզվում է՝ ոչ միայն հենց իրենք՝ նախկիններն էին զուսպ եւ քաղաքակիրթ, եթե կուզեք՝ անգամ մարդասեր ու հանդուրժող, այլեւ եվրոպացի վերահսկողներն էին ավելի լավը՝ վստահելի, խստապահանջ ու լրջմիտ, քննախույզ եւ զգոն: Նրանք գտնում էին ամեն թերություն, ամեն կոշիկի մեկ թայ ընտրակաշառք, ամեն թաքնված սպառնալիքի վտանգ, թաղային հեղինակությունների կուտակումներ տարածքում, մի բառ, մի ծպտուն՝ նրանք ամեն ինչ տեսնում, գրանցում եւ արձագանքում էին: Դժգոհ էին հիմնականում: Իսկ հիմա, ուրեմն, գոհ են՝ ամբողջովին:

Լավ ժամանակներ էին, փաստորեն, բայց մենք մերժեցինք՝ ավելի լավը երազելով: Մենք վտանգի տակ դրեցինք մեզ համար թանկ շատ բան՝ «իրական ժողովրդավարական երկիր» համարվելու համար: Զոհողությունն արվեց ու իրականացավ, իսկ ժողովրդավարությունն այդպես էլ մնաց չիրականացած: Մենք սա չենք երազել: Սա չէր մեր երազած ժողովրդավարական Հայաստանը:

Մենք չենք ցանկացել լսել այս դժոխային աղմուկը, սպառնալիքները, այս վայրենի հուսահատությունը՝ իշխանություն պահելու մոլուցքից խենթացած, այն էլ այսօր՝ պատերազմի վերքերի ու կորստի վշտի մեջ: Մենք սա չենք երազել, ուրեմն՝ ո՞վ է երազել այդքան դաժան...

Շաբե ԱՎՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 20.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

6 ՏԱՐԻ ԴԱՏ Ա ԳՆՈՒՄ, ԱՅ ԱՊԵՐԱԽՏ, ԻՆՉԻ՞ ՄԻ ԱՆԳԱՄ ՉԵՍ ՀԵՏԱՔՐՔՐՎՈՒՄ՝ ԻՆՉ ԵՂԱՎ

«Հիշում եք, երբ Մովսեսը 40 տարի իր ժողովրդին անապատների միջով ուղեկցեց դեպի Ավետյաց երկիր, մեր 40 տարին ավարտվել է, մենք տեղ ենք հասել»,- Սպիտակում նախընտրական ելույթի ժամանակ ասաց Նիկոլ Փաշինյանը: Սպիտակցի մի պապիկ՝ Արտյոմ Գրիգորյանը, որի թոռն այրվել է Ազատ գյուղի հրդեհի ժամանակ, ընդհատեց Նիկոլ Փաշինյանի նախընտրական ելույթը. «Ես իմ երեխուն եմ ուզում, Ազատ գյուղում տարավ վառեց»: «Հա, հայրիկ ջան, հա ... Ժողովուրդ ջան, էս հիմա թրենդ է դառել, ամեն տեղ մեկին ուղարկում են, եկեք ուշադրություն չդարձնենք»,- ասաց Փաշինյանը, որին նյարդայնացնում են իր 8-ամյա գործունեության հետեւանքների մասին հիշեցումները: Փաշինյանի թիկնապահներն արագ մոտեցան, փակեցին Արամ Մանուկյանի պապի՝ Արտյոմ Գրիգորյանի բերանը եւ բռնությամբ հեռացրին հավաքի վայրից: Տարեց մարդը դիմադրում էր՝ ասելով, որ ինքն իր իրավունքներն է պաշտպանում, սակայն՝ ապարդյուն, անհայտ անձինք նրան ուժով հեռացնում էին հանրահավաքի վայրից: «Հրապարակը» զրուցել է **Արտյոմ Գրիգորյանի** հետ:

- Ինչպե՞ս եք, ինչո՞ւ էին Ձեզ քաշքշում: Ո՞ւր տարան Ձեզ:

- Ուզում էի Փաշինյան կոչեցյալին իմ պահանջը ներկայացնել, բերանս փակեցին, ձեռքերս կապեին ու տարան չգիտես ուր:

- Ովքե՞ր էին դրանք:

- Նիկոլի ախրաննիկները, էլ ովքե՞ր պետք ա լինեին: Սպիտակ էր եկել Նիկոլը, ես էլ ուզում էի ասեմ՝ ինչի՞ իմ մինուճար տղա երեխուն տարար վառեցիր, այ անամոթ: Բայց էն էլ ինչ՝ ինձ տարան մի կողմի վրա, բերանս փակեցին, հետո ախրաննիկները սկսեցին իրար ականջի փսփսալ, ինչոր բաներ ասել, մինչեւ Նիկոլի ելույթը չվերջացավ, ինձ բաց չթողեցին:

- Ազատ գյուղում 15 զինվորների մահվան գործը մինչ օրս քննվում է դատարանում: Դատական պրոցեսից դժգո՞հ եք:

- Դժգոհը ո՞րն ա, շատ դժգոհ: Ես Նիկոլին մի հատ շատ պարզ հարց ունեի՝ ինչի՞ համար հելար հրդեհի օրը հայտարարեցիր, որ մեր երեխեքը մի բաժակ բենզին լցրեցին վառարանի մեջ, հրդեհ եղավ: Նիկոլ, ես հիմա նորից եմ ասում՝ մեր երեխեքի մահվան համար դու ես մեղավոր, եթե դու ղեկավարի շնորհք ունենայիր, նման բան տեղի չէր ունենա: Արդեն երեք տարի ա՝ դատավարությունը գնում ա, այ ապերախտ, բա ինչի՞ չես հետաքրքրվում մի անգամ, թե ինչ եղավ: Բայց, ինչպես տեսաք, ինձ բռնեցին, տարան, չթողեցին ես իմ ասելիքն ասեմ դրան: Ապացուցված ա մեզ համար, որ մեր տղերքին սպանել են: Հրդեհից 12 րոպե անց մեր երեխեքը ողջ են եղել, դա ապացուցված բան ա, հեռախոսներով խոսել են: Անցած անգամ էլ ինձ դատավորը հանեց նիստերի դահլիճից՝ ինչի՞ համար, որ ես ասեցի՝ Փաշինյան Նիկոլին կանչեք, որ ցուցմունք տա, ի վերջո՝ ինքն ա հրդեհի օրը հայտարարություններ արել, մանրամասներ հայտնել իբր թե:

- Նիկոլ Փաշինյանը մեղադրում է Միհրան Մախսուդյանին, ասում է՝ գնացեք, իրեն պահանջներ ներկայացրեք:

- Ի՞նչ Մախսուդյան, ի՞նչ բան, ես Նիկոլին եմ ճանաչում եւ իրենից եմ պահանջում, հրամանատարը ստեղ «պրիչոմ»: Ամենամեծ մեղավորը հենց ինքն ա:

- Առաջիկա ընտրություններին կցանկանա՞ք, որ Փաշինյանն ընտրվի:

- Եթե Նիկոլն ընտրվեց, ուրեմն երկիրը կործանված ա:

- Սպիտակից շա՞տ մարդ կար՝ Փաշինյանի հետ հանդիպմանը:

- Ես Սպիտակի 80 տոկոսին ճանաչում եմ, լիքը մարդիկ էլ ինձ են ճանաչում, որ ինձ քաշում էին, մարդիկ ասում էին՝ արա, էս ի՞նչ եք անում: Փաշինյանը հետեւիցս ասել ա՝ 200 հազար դրամ փող եմ վերցրել Սամվել Կարապետյանից, դրա համար եմ գնացել իրենից պատասխաններ պահանջելու: Տո շան տղա, դու ինձ առաջին անգամ ես տեսնում, տո անամոթ: 2018 թվականին ես դրան եմ ընտրել, բայց եթե էս անգամ էլ ընտրվեց, վերջ....

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am